Ուսումնառության զորությունն ու բերկրանքը

ՄԱՆԻՖԵՍՏ
Մեծահասակների ուսումնառությունը
21-րդ դարում

EUROPEAN ASSOCIATION FOR THE EDUCATION OF ADULTS

ՄԱՆԻՖԵՍՏ
Մեծահասակների ուսումնառությունը
21-րդ դարում

EUROPEAN ASSOCIATION FOR THE EDUCATION OF ADULTS

Հրատարակիչ՝ Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիա (ՄԿԵԱ)
Տեքստը մշակվել է ՄԿԵԱ-ի աշխատակազմի, խորհրդի և անդամների համատեղ ջանքերով:

Էջադրումը՝ Նինա Թուրինայի, Studio Nooon 2024

Այս գրքույկը ստեղծվել է Ֆինլանդիայի կրթության և մշակույթի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

MINISTRY OF EDUCATION AND CULTURE FINLAND

Ֆինանսավորվել է Եվրոպական Միության կողմից: Տեքստում արտահայտված տեսակետներն ու կարծիքները հեղինակներինն են և հնարավոր է, որ չարտացոլեն Եվրոպական Միության և Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (ԵԿՄԳԳ) դիրքորոշումները, ուստի ԵՄ-ն և ԵԿՄԳԳ-ն պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Co-funded by the European Union

Մասնակիցները համաձայնել են միջոցառումների ընթացքում կատարված լուսանկարների (որտեղ նրանք կարող են երևալ) հրապարակմանը սոցիալական հարթակներում, ինչպիսիք են Twitter-ը և Facebook-ը, ՄԿԵԱ-ի և Եվրոպայում մեծահասակների կրթության խթանման նպատակով՝ համաձայն Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնադրության պահանջներին:

Բովանդակություն

Ուսումնառության զորությունն ու բերկրանքը 03

Խաղաղություն և ժողովրդավարություն 06

Շրջակա միջավայրի կայունություն և կանաչ անցում 09

Բարեկեցություն և դիմակայունություն 12

Կյանքի հմտություններ 14

Ներառում, հզորացում և սոցիալական արդարություն 17

Զբաղվածություն և աշխատանք 20

Թվայնացում 23

Ժողովրդագրական փոփոխություն և միգրացիա 25

Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը և եվրոպական ու միջազգային քաղաքականությունները 28

Ուսումնառության զորությունն ու բերկրանքը

Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիան (ՄԿԵԱ) սույն մանիֆեստով առաջարկում է կերտել Սովորող Եվրոպա, որը կարող է ստեղծել դրական ապագա՝ հիմնվելով անհրաժեշտ հմտությունների, գիտելիքների և կոմպետենցիաների վրա:

Եվրոպական 43 երկիր ներկայացնող ՄԿԵԱ 120 անդամները առաջարկում են համաեվրոպական ջանքեր գործադրել՝ զարգացնելու այնպիսի հասարակություն, որը կկարողանա հաղթահարել մեր ժամանակների մարտահրավերները մեծահասակների ուսումնառության և կրթության միջոցով:

Սույն մանիֆեստով մենք ցանկանում ենք ցույց տալ, թե ինչպես կարող է մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը (ՄՈՒԿ) օգնել Եվրոպայում առկա բազմաթիվ մարտահրավերների լուծմանը: Մենք ներկայացնում ենք փաստարկներ, հետազոտական տվյալներ, հաջողված փորձ և սովորողների պատմություններ: Դրանք ցույց են տալիս, որ մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը կարող է փոխել կյանքեր և վերափոխել հասարակություններ:

Մենք ցանկանում ենք նաև հատուկ ընդգծել ուսումնառության բերկրանքը: Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունն ունի բազմաթիվ առավելություններ՝
առավել ինքնավստահ սովորողներ, սոցիալական կապերի ընդլայնում, առողջության բարելավում և բազմաթիվ այլ օգուտներ: Ուսումնառության բերկրանքը հասկանալն ու զգալը կարող է և պետք է լինի յուրաքանչյուրի կյանքի մաս:

Ուստի, եկե՛ք կերտենք սովորող Եվրոպա, որտեղ բոլորս կօգտվենք ուսումնառության զորությունից և բերկրանքից:

Ի՞նչ ենք հասկանում մեծահասակների ուսումնառություն և կրթություն ասելով

Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը ներառում են ուսումնառության և հմտությունների երեք հիմնական տիրույթներ: Առաջին՝ գրագիտություն և բազային հմտություններ, երկրորդ՝ շարունակական կրթություն և մասնագիտական հմտություններ, և երրորդ՝ ազատական, ժողովրդական և համայնքային կրթություն ու քաղաքացիական հմտություններ:

ՄՈՒԿ-ի վերջնանպատակը մեծահասակներին հասարակական կյանքին լիարժեք մասնակից դարձնելն է, այդ թվում՝ աշխատանքային ոլորտում: ՄՈՒԿ-ը հնարավորություն է տալիս մարդկանց զարգացնել իրենց իրավունքների իրացման համար անհրաժեշտ կարողությունները և կառավարել իրենց ճակատագիրը: Այն խթանում է անձնական և մասնագիտական աճը՝ աջակցելով մեծահասակների ակտիվ ներգրավվածությանը հասարակությունում, համայնքում և միջավայրում: Այն խթանում է բնապահպանական և ներառական տնտեսական բարեկեցությունը ու արժանապատիվ աշխատանքը:

ՄՈՒԿ-ը, հետևաբար, «կարևոր գործիք է աղքատության նվազեցման, առողջության և բարեկեցության բարելավման և կայուն ուսումնառող հասարակությունների ձևավորման համար»:[1]

ՄՈՒԿ-ը բազմամյա ավանդույթ ունի բազմաթիվ եվրոպական երկրներում: Տարբեր լեզուներով այն անվանում են folk-bildning, Volksbildung կամ educación popular:

Մենք միավորում ենք ուսումնառության բոլոր ձևերը, սակայն կենտրոնանում ենք ոչ ֆորմալ կրթության, ինչպես նաև մեծահասակների ընդհանուր ուսումնառության և կրթության վրա:

Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիան (ՄԿԵԱ), 43 երկրներում իր 120 անդամների հետ միասին, առանձնացրել է մեծահասակների ուսումնառության և կրթության հետևյալ հիմնարար սկզբունքները.

- Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը մարդու իրավունք է և հանրային բարիք:
- Յուրաքանչյուր ոք բարձրորակ ՄՈՒԿ հասանելիության և մասնակցության իրավունք ունի և պետք է հնարավորություն ունենա իրացնել այն:
- ՄՈՒԿ-ը կարող է փոխակերպել կյանքեր, ընտանիքներ, համայնքներ և հասարակություններ: Այն կարող է դեպի լավը փոխել երկրները և Եվրոպան:
- Յուրաքանչյուր ոք կարող է սովորել, ներառյալ՝ բոլոր տարիքի, ծագման, համայնքի, ինչպես նաև նեյրոդիվերգենտ անձինք:
- ՄՈՒԿ-ը ժողովրդավարական հասարակությունների և կառույցների անբաժանելի մասն է:
- ՄՈՒԿ-ը պետք է հիմնված լինի սոցիալական ներառման, հավասարության խթանման և բազմազանության գնահատման արժեքների վրա:
- Սովորողը պետք է լինի ՄՈՒԿ ծրագրերի մշակման, մեթոդաբանության, գործընթացների և արդյունքների կենտրոնում:
- ՄՈՒԿը կարող է ոգևորել սովորողներին մասնակցելու հասարակական կյանքին:

---

[1] UNESCO Institute for Lifelong Learning. (2015). UNESCO Recommendation on Adult Learning and Education (RALE). Retrieved April 15, 2024, from https://www.uil.unesco.org/en/adult-education/unesco-recommendation.

- Ժողովրդական բարձրագույն դպրոցների, համայնքային կրթության և հանրային կրթության մոդելները փոխակերպող ՄՈՒԿ փորձառություններ են՝ ուղղված սոցիալական և հանրային բարիքին:
- ՄՈՒԿ-ը պետք է ճկուն լինի և ապահովի ներառական ու համապարփակ աջակցության համակարգեր՝ ներառելով հասարակության այն անդամներին, որոնք հայտնվել են անբարենպաստ կամ մարգինալացված պայմաններում և/կամ ունեն ցածր բազային հմտություններ:
- ՄՈՒԿ-ը պետք է աշխատի անբարենպաստ պայմաններում հայտնված սովորողներին հասնելու համար՝ պայքարելու «Մեթյուի էֆեկտի» դեմ (երբ առավել կրթված մարդիկ ունեն ավելի շատ ուսումնառության հնարավորություններ), օրինակ՝ իրենց աշխատավայրում կանխել այն անձանց բացառումը, ովքեր ունեն սահմանափակ ֆորմալ որակավորումներ:
- Հզորացնող, սոցիալապես ներառող և ստեղծագործական մեթոդների և գործելակերպերի կիրառումը հանգեցնում է նշանակալի, փոխակերպող և ոգեշնչող ուսումնառության փորձառության: Սա հատկապես կարևոր է այն մարդկանց համար, որոնք կորցրել են վստահությունը ֆորմալ կրթության նկատմամբ՝ նախկինում ուսումնառության բացասական փորձառության հետևանքով:
- ՄՈՒԿ-ը բարելավում է բարեկեցությունը, հոգեկան առողջությունը, ինչպես նաև անձնական և համայնքային զարգացումը:
- Արհեստավարժ և որակավորված մեծահասակների ուսուցանողները (ում հաճախ անվանում են նաև դասավանդողներ, դասընթացավարներ կամ ուսուցիչներ) և աշխատակազմը որակյալ և ներազդող/արդյունավետ ՄՈՒԿ ծրագրերի հաջողության բանալին են:
- Կարողությունների զարգացումը և ռեֆլեքսիվ պրակտիկաները ՄՈՒԿ-ում կարևոր դեր են կատարում՝ ուսումնառության և դասավանդման հարմարեցման և փոփոխությունների կանխատեսման համար:
- Համագործակցությունը (ինստիտուցիոնալ, տեղական, տարածաշրջանային, եվրոպական և գլոբալ մակարդակներում) կենսական նշանակություն ունի ՄՈՒԿ-ի տեսանելիության, միմյանցից սովորելու և լավագույն փորձի փոխանակման համար:
- Մանիֆեստի «Առաջարկություններ» բաժնում դուք կգտնեք այս սկզբունքները իրականություն դարձնելու ուղղությամբ մեր առաջարկները:

Խաղաղություն և ժողովրդավարություն

Մարտահրավերներ.

- աճող ատելության խոսք, ծայրահեղականություն, պոպուլիզմ, քսենոֆոբիա (այլատյացություն), հակասեմիտիզմ և գիտական փաստերի ժխտում, որոնք հաճախ ամրապնդվում են սոցիալական մեդիայի և կեղծ լուրերի միջոցով,
- ավտորիտար գործելաոճի աճ, լարված աշխարհաքաղաքական իրավիճակ,
- ընտրությունների մտահոգիչ արդյունքներ և քվեարկելու վարքագծային փոփոխություններ,
- զինված հակամարտություններ և արտակարգ իրավիճակներ Եվրոպայում և այլուր:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը

ՄՈՒԿ-ը առանցքային գործիք է քննադատական մտածողության և ակտիվ ու ոգեշնչված քաղաքացիական հասարակության զարգացման համար: Միևնույն ժամանակ, ՄՈՒԿ-ը ապահովում է անվտանգ միջավայր ակտիվ քաղաքացիության ձևավորման համար: Այն ունի կամուրջներ կառուցելու և տարբեր երկրներում մարդկանց միավորելու, ինչպես նաև հաշտեցմանը նպաստելու երկարատև ավանդույթ: Քաղաքացիական հմտություններն ու ուսումնառությունը կարող են խթանել վստահության ձևավորմանը և հակակշռել ատելության պատումներին: Սա պետք է ամրապնդվի ոչ միայն Եվրոպայում, այլև գլոբալ մակարդակով: ՄՈՒԿ-ը կարող է խթանել եվրոպացիների շրջանում գաղութատիրական ժառանգության ընկալումը և դրա համար պատասխանատվության զգացման ձևավորումը, ինչպես նաև գաղութատիրական դեռևս առկա մեխանիզմների վերհանումը:

ՄՈՒԿ-ը զգալի նշանակություն ունի թվային աշխարհի ըմբռնման տեսանկյունից՝ առանցքային դեր խաղալով մեդիա գրագիտության բարձր մակարդակի խթանման գործում: ՄՈՒԿ-ը համախմբում է մարդկանց և նպաստում սովորողների և տարբեր խմբերի միջև ավելի խորը փոխըմբռնմանը: Այսպիսով, ՄՈՒԿ-ը ձևավորում է փոխանակման, համագործակցության և հարգանքի միջավայր:

ՄՈՒԿ-ը ուժեղացնում և վերակերտում է քաղաքացիական հասարակությունը՝ ձևավորելով պատասխանատվություն, ինչպես նաև Եվրոպային ու ավելի լայն աշխարհին պատկանելու զգացողություն: Ժողովրդավարությունը հնարավոր է դառնում միայն լայն մասնակցության և որոշումների կայացման գործում նշանակալի ներդրման, ինչպես նաև բոլոր քաղաքացիների և շահագրգիռ կողմերի կողմից քաղաքական և հասարակական խնդիրների քննադատական գնահատման շնորհիվ:

ՄԿԵԱ-ն և նրա անդամները խորապես հավատարիմ են Եվրոպային և եվրոպական արժեքներին: Մենք համոզված ենք, որ խաղաղությունը, ժողովրդավարությունը, միջմշակութային երկխոսությունը, սոցիալական արդարությունը և համագործակցությունը առանցքային են Եվրոպայում հարգանքի, մասնակցության և համախմբվածության համար:

Ժողովրդավարությունն ու եվրոպական մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունն ունեն ընդհանուր արմատներ և պատմություն: Բազմաթիվ ՄՈՒԿ կազմակերպություններ ստեղծվել են ազատագրական շարժումների (աշխատավորներ, կանայք, կրոնական կազմակերպություններ և այլն) արդյունքում և, հետևաբար, առանցքային դեր են ունեցել ժողովրդավարական կառույցների, բարեկեցիկ պետությունների և Եվրոպայի բարգավաճման գործընթացում:

Հետազոտական տվյալներ

Պրեսթոնը (2004) վերլուծել է ՄՈՒԿ ազդեցությունը մասնակիցների քաղաքացիական կյանքի և արժեքների, հատկապես հանդուրժողականության ձևավորման վրա: Անձնական ներգրավվածությունը կրթության մեջ կանխատեսում է նաև հասարակական կյանքում մասնակցությունը, քանի որ «որքան շատ են ուսումնառողները ներգրավված իրենց կրթության մեջ, այնքան ավելի պատրաստ են դրական դեր խաղալ հասարակական կյանքում»: [2]

Ավելին, ՄՈՒԿ-ը հանգեցնում է ռասայական հանդուրժողականության աճին և քվեարկության հավանականության բարձրացմանը: Պրեսթոնը պարզել է, որ ուսումնառությունը ազդում է ինֆորմալ և ֆորմալ քաղաքացիական մասնակցության վրա: Այն օգնում է անհատներին կառուցել, պահպանել, քանդել, վերակառուցել և հարստացնել իրենց սոցիալական կապերը:

Բացի այդ, ուսումնառությունը ազդեցություն է ունենում արժեքների ձևավորման վրա: Օրինակ, ըստ հարցվողների, այն ազդեցություն է ունեցել համբերության, ըմբռնման և հարգանքի վրա:
Սմիթի և Դյուխվորթի (2023) ներկայիս հետազոտությունը «քննադատում է նվազեցվող հմտությունների քաղաքականությունը կրթությունում և ընդգծում է քոլեջների և շարունակական ուսումնառության ազդեցությունը անհատների, նրանց ընտանիքների և համայնքների սոցիալական արդարության արդյունքների վրա»:’[3] Քաղաքացիական և սոցիալական ներգրավվածությունը (ՔՍՆ) որպես ուսումնառության վերջնարդյունք վերլուծության է ենթարկվել նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից:[4]

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Քաղաքացիական դիվանագիտություն

Գլոբալ մարտահրավերները չեն սահմանափակվում ազգային սահմաններով և կարող են լուծվել միայն համատեղ, միջազգային համագործակցության միջոցով՝ ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական մակարդակներում: «Քաղաքացիական դիվանագիտություն» հայեցակարգը հիմք է հանդիսացել Urban X-Change Network[5]-ի համար, որը հնարավորություն է տալիս ինը գերմանական մեծահասակների կրթության կենտրոններին (Volkshochschule) և նրանց գործընկերներին Մեծ Բրիտանիայում, Ուկրաինայում և ԱՄՆ-ում իրականացնել միջսահմանային մշակութային և կրթական ծրագրեր՝ սերտ համագործակցելով քաղաքային կառավարման և տեղական քաղաքացիական հասարակության հետ:

Օրակարգ 2030-ը սահմանում է թեմատիկ շրջանակը, որն ընդգրկում է կոշտ թափոնների կառավարումը, խաղաղության կրթությունը, միգրանտների համար ընդունելության մշակույթի ձևավորումը և LGBTQIA+ համայնքների փորձառությունները: Այսպիսով, ծրագիրը ոչ միայն հնարավորություն է տալիս գործընկերային ուսումնառության և փոխանակման, այլև նպաստում է գործընկեր երկրի փոխըմբռնմանը:

---

[2] Preston, J., & Feinstein, L. (2004). Adult education and attitude change: Wider benefits of learning (Research Report No. 11). Retrieved from https://discovery.ucl.ac.uk/id/eprint/10015019/

[3] Smith, R., & Duckworth, V. (2023). Transformative teaching and learning in further education: Pedagogies of hope and social justice. DOI: 10.1332/policypress/9781447362326.001.0001

[4] Organisation for Economic Co-Operation and Development (OECD). (n.d.). Understanding the social outcomes of learning. Retrieved April 15, 2024, from https://www.oecd.org/education/ceri/understandingthesocialoutcomesoflearning.htm

[5] Urban X-Change Network. (n.d.). Retrieved April 15, 2024, from https://www.urbanxchange-network.org/

Ուսումնառության դերը ճգնաժամերում

Պատերազմից տուժած Ուկրաինայում ՄՈՒԿ մատակարարները ստիպված էին հարմարվել կյանքի կտրուկ փոփոխություններին այն պահից, երբ ռուսական զորքերը 2022 թվականի փետրվարին սկսեցին լայնածավալ ներխուժում: Սակայն ՄՈՒԿ ուսուցանողների համար հիմնական առաքելությունը մնացել է անփոփոխ՝ զարգացնել հմտություններ ու աջակցել համայնքներին, կրթության ու վերապատրաստման միջոցով բարելավել յուրաքանչյուր անձի հոգեկան ու ֆիզիկական առողջությունը, գոյատևել ճգնաժամային պայմաններում կամ սովորել հարմարվել Ուկրաինայի նոր շրջաններում կամ արտերկրում: Ուկրաինայի հարավում գտնվող Նիկոպոլ քաղաքի ՄՈՒԿ կենտրոնը, որը պատերազմի առաջին փուլում գրավված ատոմակայանից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա է գտնվում, կարի մեքենաներ ուներ, և նրանք կարճաժամկետ դասընթացների միջոցով ներգրավել են 40-45 կանանց և սկսել են բանակի ու տեղական պաշտպանական խմբերի համար հագուստ կարել, ինչպես նաև բժշկական առաջին օգնության հավաքածուներ պատրաստել: ՄՈՒԿ մատակարարները շարունակում են իրենց գործունեությունը՝ մշակելով նոր կարճաժամկետ մասնագիտական դասընթացներ ներքին տեղահանված անձանց, պատերազմի վետերանների և աշխատանքը կորցրած անձանց համար: Նրանք փորձում են հոգեբանական աջակցություն տրամադրել անհատական խորհրդատվության և խմբային արթ թերապիայի միջոցով: Բազմաթիվ դասընթացներ իրականացվում են ապաստարաններում: ՄՈՒԿ դերի կարևորության ըմբռնումը հասարակությունում աճում է շատ արագ, ոչ ֆորմալ ՄՈՒԿ ծրագրերի պահանջարկը մեծ է, և տեղական համայնքների բյուջեներից ոչ ֆորմալ ՄՈՒԿ ծրագրերի համար կայուն ֆինանսավորման դրական փորձ կա:

Սովորողի պատմություն

Էիրին, Գերմանիա

Ողջույն: Ես Էիրինին եմ, և արդեն ավելի քան մեկ տարի է հաճախում եմ Բոխումի Մեծահասակների կրթության կենտրոն (VHS Bochum)Ես Հունաստանից եմ, բայց 2015 թվականից ապրում եմ Գերմանիայում: Նախկինում երբեք լավ փորձառություն չեմ ունեցել ուսման հետ, և այդ պատճառով դուրս եմ մնացել դպրոցից: Սակայն այն պահից, ինչ հայտնվեցի Մեծահասակների կրթության կենտրոնում, իմ տեսակետը փոխվեց: Սկիզբը դժվար էր, բայց լավ էին սովորեցնում: Նույնիսկ մասնակիցներից գրեթե բոլորի հետ շփվելու լավ փորձառություն ունեցա: Բոխումի Մեծահասակների կրթության կենտրոնի մասին իմացել էի Agentur für Arbeit-ի միջոցով (աշխատանքային գործակալություն): Սկզբում վախենում էի դպրոց վերադառնալ, հատկապես, որ իմ գերմաներենը կատարյալ չէր: Բայց Մեծահասակների կրթության կենտրոնի դասավանդողներն աջակցեցին ինձ, և այժմ իմ գերմաներենի հմտությունները զգալիորեն բարելավվել են: Մեծահասակների կրթության կենտրոնը օգնեց ինձ հասկանալ, թե ինչ կարող եմ անել իմ կյանքում և ինչպես եմ ցանկանում զարգանալ: Ես իսկապես երջանիկ եմ, որ սկսել եմ հաճախել Մեծահասակների կրթության կենտրոն և այն խորհուրդ կտայի յուրաքանչյուրին, ով կյանքում ունի խնդիրներ և ցանկանում է բարձրացնել իր որակավորումը: Կես ուսումնական տարի նախագծի վրա աշխատելով ես հասկացա, որ նշանակություն չունի՝ մարդիկ որտեղից են եկել կամ ովքեր են: Մենք բոլորս ապրում ենք մեկ աշխարհում, և մեր ընդհանուր նպատակն է պահպանել այն:

Շրջակա միջավայրի կայունություն և կանաչ անցում

Մարտահրավերներ.

- կլիմայի փոփոխությունն ու դրա հետևանքները,
- շրջակա միջավայրի խնդիրներ, ինչպիսիք են կենսաբազմազանության նվազումը, սննդի թափոնները, օդի աղտոտումը, պլաստիկից աղտոտումը, հողի դեգրադացումը,
- կայուն զարգացման նպատակներին հասնելն ու իրագործելը:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը

ՄՈՒԿ-ը նպաստում է կայունությանը բոլոր մակարդակներում՝ և ոչ միայն հմտությունների, գիտելիքների և կոմպետենցիաների տրամադրմամբ: ՄՈՒԿ-ը տրամադրում է տեղեկատվություն, բանավիճելու միջավայր և ստեղծագործականություն՝ զարգացնելու նոր կենսակերպ, նոր նախագծեր և նոր մոտեցումներ, որոնք անհրաժեշտ են կանաչ անցման և կայուն զարգացման համար: Սա ներառում է գործնական լուծումներ յուրաքանչյուր կոնկրետ խնդրի համար (օրինակ՝ նյութերի վերամշակում և վերօգտագործում, քաղաքային այգեգործություն և քաղաքային մեղվաբուծություն), ինչպես նաև միմյանց հետ երկխոսություն սկսելը և ավելի լայն հասարակական քննարկումներում ներգրավվելը՝ ավելի լավ հասկանալու շահագրգիռ բոլոր կողմերի դերը և հասնելու խնդիրների արմատներին: Ինչպես ցույց են տալիս հաջողված փորձի օրինակները, ՄՈՒԿ-ը կարող է խթանել կենսակերպերի, ուսումնառության և աշխատանքի նորարարական մոտեցումները:

Կլիմայական ճգնաժամի լուծումն իր ծավալներով կարող է անհաղթահարելի թվալ թե՛ անհատի, թե՛ համայնքային մակարդակում: Այնուամենայնիվ, մեծահասակ ուսումնառուների, ուսուցանողների և համայնքային կազմակերպիչների կողմից ՄԿԵԱ-ին ներկայացված հաջողված օրինակների բազմազանությունն ու առատությունը ցույց են տալիս, որ բազմաթիվ ջանքերն արդեն արդյունք են տալիս: Թեև գործողությունների իրականացման տեղական համատեքստն ու անձնական դրդապատճառները կարող են տարբերվել, սակայն գործելու, ապրումակցելու և երկխոսության արդյունքները տեսանելի են ամենուր:

Դիտարկելով գլոբալ «Օրակարգ 2030»-ը՝ կարելի է ասել, որ ՄՈՒԿ-ը նպաստում է Կայուն զարգացման բոլոր 17 նպատակների (ԿԶՆ) իրագործմանը՝ փոփոխությունների հիմքեր դնելով սոցիալական, քաղաքական, տնտեսական, բնապահպանական և մշակութային ոլորտներում:
17 նպատակներից յուրաքանչյուրում առնվազն մեկ թիրախ ներառում է ուսումնառություն, վերապատրաստում, կրթություն կամ, նվազագույնը՝ կրթությանն ուղղված իրազեկվածության բարձրացում: Միևնույն ժամանակ, ՄՈՒԿ-ը և ցկյանս ուսումնառությունը ոչ միայն Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրագործման միջանկյալ նպատակ և մեթոդ են, այլև առանձին նպատակ: Ըստ ԿԶՆ 4-ի, անհրաժեշտ է ապահովել ներառական և հավասար որակյալ կրթություն և ցկյանս ուսումնառության հնարավորություն բոլորի համար:

Հետազոտական տվյալներ

Կանաչ տնտեսության անցումը[6] պահանջում է փոփոխություններ բոլոր ոլորտներում և մասնագիտություններում, և այստեղ մասնագիտական կրթությունն ու ուսուցումը (ՄԿՈՒ) և ՄՈՒԿ-ը պետք է հիմնարար դեր ունենան: Դրա կարևորությունը պետք է գիտակցեն քաղաքականություն մշակողները, հատկապես, երբ տնտեսական վերականգնմանն ուղղված ֆինանսավորում են հատկացնում: Լինի դա նոր հմտությունների ձեռքբերում նոր աշխատատեղերի համար, ինչպես օրինակ՝ վերականգնվող էներգիան, թե հմտությունների կատարելագործում աշխատանքի տեղում (օրինակ՝ անցում օրգանական գյուղատնտեսությանը կամ թափոնների կառավարմանը), ՄՈՒԿ-ը և հմտությունների զարգացումը հիմնարար նշանակություն ունեն արդյունաբերության, աշխատողների և տնտեսության ապագայի համար:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

«Քաղաքացու անձնագիր» նախագիծ

«Քաղաքացու անձնագիր 2030»[7] -ը, որը Շվեյցարիայի Յուրայի ժողովրդական համալսարանի նախագիծն է, ՄՈՒԿ մասնակիցներին տալիս է միավորներ ուսումնառության չորս ուղղություններում՝ շրջակա միջավայրի կայունության հմտություններ, լսելու և ինքնավերլուծության հմտություններ, համայնքաշինության և սոցիալական ներառման հմտություններ, ինչպես նաև ֆիզիկական և մտավոր բարեկեցության հմտություններ: Հետևաբար այս չորս ուղղություններում հաշվի են առնվում կայունության և կանաչ անցման համար անհրաժեշտ ավելի լայն հմտությունների շրջանակ: Մասնակցելով ՄՈՒԿ դասընթացներին՝ մարդիկ կարող են հավաքել այս միավորները և ստանալ «կնիքներ» իրենց անձնագրերում: Մարդիկ կարող են նաև միավորներ հավաքել՝ ընթերցելով ընտրված գրքեր «Բիբլոբասից», որը գրադարանային ավտոբուս է և ուղևորվում է հանրային գրադարաններին սահմանափակ հասանելիություն ունեցող գյուղեր և հեռավոր շրջաններ: Տարին մեկ անգամ «լավագույն» ուսումնառուները , որոնք ամենաշատ կնիքներն են ստացել, պարգևատրվում են:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Արևային խոհանոց Վրաստանում

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից ֆինանսավորվող «Նորարարությունը մեծահասակների կրթությունում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Շուքուրա ինտերակտիվ թանգարանը իրականացրել է «Արևային խոհանոց կամ պարաբոլոդ արևային օջախ» ծրագիրը:[8] Էներգիայի օգտագործումը որպես ամենաարդյունավետ բնական ռեսուրսներից մեկը և աջակցել Վրաստանում արևային էներգիայի կիրառմամբ էկոլոգիապես մաքուր մեթոդներով սննդի պատրաստման տարածմանը: Այս նպատակով Շուքուրայի թանգարանը ստեղծել է հինգ արևային սալօջախ և դրանք բաժանել Վրաստանի Մեծահասակների կրթության հինգ կենտրոններին: Այս ծրագիրը բարձրացնում է բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին իրազեկվածությունը և տեղի բնակչությանն առաջարկում էներգաօգտագործման այլընտրանքային տարբերակ: Մեծահասակների կրթության կենտրոնները օգտագործում են արևային օջախներն ի օգուտ համայնքների՝ կազմակերպելով խոհարարական դասընթացներ և հանրային բացօթյա միջոցառումներ: Ավելին՝ ներգրավված բոլոր կենտրոնները նախաձեռնել են էկոլոգիական խորհրդատվական ծառայություններ և աշխատում են տեղի համայնքի հետ էկոլոգիական խնդիրների շուրջ տեղեկատվության տարածման ուղղությամբ՝ ներառյալ կայուն շենքերի և նյութերի, սոցիալ- բնապահպանական զարգացման հարցերը:

---

[6] Jeon, S. (OECD). (2020). Adult education and training for green transitions. In *The role of adult education in fostering environmental awareness* (pp. 11-16). Vienna.

[7] Le projet “Passeport Citoyen 2030” a été réalisé de 2020 à 2022 avec l’UP Jurassienne. (n.d.). Retrieved April 15, 2024, from https://www.passeportcitoyen2030.ch/

[8] DVV International revealed the winners of the grant programme “Innovation in Adult Education.” (n.d.). Retrieved April 15, 2024, from https://www.dvv-international.ge/georgia/news/article/dvv-international-revealed-the-winners-of-the-grant-programme-innovation-in-adult-education

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

«Մենք փոփոխություն ենք բերում» խումբ

ASTO[9] նախաձեռնությունը (Պատրաս, Հունաստան) ձևավորում է 15-20 հոգանոց փոքր խմբեր, որոնք մասնակցում են տարբեր միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը: Սովորողների և ուսուցանողների միջև խիստ բաժանում չկա, և բոլոր խմբերը հիմնված են փոխադարձ ուսումնառության սկզբունքի վրա: Խմբերն ունեն հստակ թեմաներ և նմանատիպ նպատակներ, քննարկում են որոշակի թեմաներ և համապատասխանաբար գործում: «Մենք փոխում ենք» խումբը ձևավորվել է, երբ համայնքի որոշ անդամներ կամավոր հանդես եկան տեղական լողափը մաքրելու նախաձեռնությամբ: Այն սկսվեց որպես փոքր նախաձեռնություն, և ժամանակի ընթացքում ավելի շատ մարդիկ միացան՝ բնության հանդեպ պատասխանատվությունից դրդված գործելու: Այսօր խումբը բաղկացած է մոտ 50 մշտական անդամներից, որոնք պարբերաբար հանդիպում են, իսկ ևս 200 անդամներ մասնակցում են ամենաակտիվ միջոցառումներին: Խմբի վերջին նախաձեռնություններից են սերմերի գրադարանի ստեղծումը և հանրային հրապարակի վերակառուցումը՝ այն ավելի կանաչ և ներառական դարձնելու նպատակով:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Համայնքային կենտրոններում կանաչ հմտությունների ուսուցանում

Քըրըքիան համայնքային կենտրոնը բացվել և գործում էր YUVA-ի (Կամավորական գործունեության երիտասարդական միություն) կողմից 2013-2020 թվականներին՝ բոլոր տարիքային խմբերի սիրիացի փախստականներին և հյուրընկալող համայնքներին բազմաբնույթ ծառայություններ մատակարարելու (կենսապահովում, կրթություն և պաշտպանություն) համար: Ներկայումս չգործող այդ կենտրոնն ուներ առանց մսի երկուշաբթի և բնապահպանական ուսուցման ծրագրեր, կոմպոստավորման աշխատանքներ և զրոյական թափոնների քաղաքականություն: Պիկնիկները և խոհարարական աշխատարանները իրականացվում էին կայունության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար:

Բրյուսելում Էլզենհոֆի համայնքային կենտրոնը համախմբում է բնակիչներին մի շարք միջոցառումների շուրջ, որոնցից շատերը հիմնված են կայունության սկզբունքի վրա: Միջոցառումները ներառում են սրճարանի վերանորոգում, խոհարարության դասեր ուտելիքի մնացորդներից և կլիմայական արդարության թեմայով ցուցահանդես:

Էլզենհոֆի համայնքային կենտրոն (2023)
Լուսանկարը՝ Ալեքսանդրա Կոզիրայի

[9] ASTO Group – Let's Change. (n.d.). Retrieved April 15, 2024, from https://astopatras.gr/

Բարեկեցություն և դիմակայունություն

Մարտահրավերներ.

- հոգեբանական այրման և այլ սթրեսներից բխող հոգեկան ու ֆիզիկական առողջության բարձր ռիսկ, սոցիալական մեկուսացում, հուսահատության զգացում բազմաթիվ մարտահրավերների պայմաններում,
- ինքնավստահության, ինքնաբավության պակաս և կյանքի նպատակի բացակայություն,
- դիմակայունության համար աջակցության և գործիքների պակաս:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը

Փաստերը ցույց են տալիս, որ ՄՈՒԿ-ը, և հատկապես տրանսֆորմատիվ/փոխակերպող ուսումնառությունը, մարդկանց ավելի ինքնավստահ և արդյունավետ է դարձնում: Մարդիկ գիտակցում են սեփական կարողությունները և հմտությունները, ինչը հանգեցնում է սեփական կյանքը կառավարելու կարողությանը և համայնքի ակտիվ ու ինտեգրված անդամ դառնալուն: Ուսումնական ծրագրերում մասնակցությունը մեծահասակներին հնարավորություն է տալիս ձեռք բերել բարեկեցության և դիմակայունության կարևոր հմտություններ՝ իրենց կյանքը վերահսկելու և անձնական ու սոցիալական փոփոխություններ իրականացնելու համար: Սա հանգեցնում է սեփական կյանքից ընդհանուր առմամբ ավելի մեծ բավարարվածության զգացմանը, ինչպես նաև կյանքի իմաստի ուժեղացմանը: Բարեկեցության և դիմակայունության հմտությունները, ի թիվս այլոց, ներառում են քննադատական մտածողությունը, լայնախոհությունը, հուզական կարգավորումը, բարեխղճությունը, էքստրավերտությունը և համագործակցությունը:

Բարեկեցությունը նաև ուղղակիորեն կապված է կյանքի այնպիսի փորձառությունների հետ, ինչպիսիք են առողջական խնդիրներին, կյանքի անցումային փուլերին և տարիքային փոփոխություններին հաջող հարմարվելու գործընթացը: Դա նաև ներառում է վարքագծային հարմարվողականություն սոցիալական, տնտեսական և բնապահպանական փոփոխություններին, ինչպես նաև ընդհանուր արտաքին ճգնաժամերին:

Բացի այդ, ՄՈՒԿ դասընթացները միավորում են մարդկանց ընդհանուր հետաքրքրության շուրջ և նպաստում համայնքային (ֆիզիկական կամ թվային միջավայրում) պատկանելիության զարգացմանը՝ նպաստելով սոցիալական ներառմանը, որն իր հերթին նպաստում է բարեկեցության և դիմակայունության ուժեղացմանը: Բացի այդ, ՄՈՒԿ-ը բարելավում է առողջությունն ու բարեկեցությունը՝ բոլոր հետաքրքրությունների և տարիքային խմբերի համար նախատեսված մարզական և ֆիզիկական վարժությունների լայնածավալ ծրագրերի, ինչպես նաև սննդակարգի և առողջ սննդի պատրաստման դասընթացների միջոցով:

Կարևոր է նշել, որ այս հմտությունները ոչ միայն նպաստում են մեծահասակ սովորողների անձնական զարգացմանն ու ինքնահիրացմանը, այլև դրական ազդեցություն ունեն նրանց սոցիալական կյանքի և մասնագիտական զարգացման վրա: Աշխատողների բարեկեցության ակտիվ խթանումը աշխատավայրում ու դրանից դուրս, օգնում է կանխել մասնագիտական այրումով պայմանավորված երկարաժամկետ անգործությունը և սթրեսով պայմանավորված այլ առողջական խնդիրները: Այն նաև օգնում է պահել աշխատակիցներին և խթանել աշխատանքից բավարարվածությանը:

Հետազոտական տվյալներ

ՄՈՒԿ-ը ազդում է մարդկանց եկամուտի և զբաղվունակության, ինչպես նաև մարդկանց հոգեկան առողջության վրա ազդող վերաբերմունքների և վարքի վրա... «Ավելի ճիշտ՝ այն մարդկանց տալիս է ռեսուրսներ, որոնք նրանք կարող են օգտագործել սեփական կյանքում փոփոխություններ կատարելու համար»: Այս փոփոխությունները կարող են առավել նշանակալի լինել նրանց համար, ովքեր նախնական կրթությունից ամենաքիչն են օգտվել:

Մեզ դեռ լիովին հայտնի չէ, թե ինչ ռեսուրսներ են օգնում մարդկանց այլևայլ փոփոխություններ իրականացնելու հարցում: Մենք միայն գիտենք, որ շատ գործնական կարողություններ, որոնք երբեմն թերահավատորեն անվանում են «բազային» կամ «զուտ գործիքային» հմտություններ կարող են շատ մեծ ազդեցություն ունենալ մարդկանց կյանքի վրա: Սրանից բացի, փաստերը ցույց են տալիս միայն այն, որ մեծահասակների ուսումնառությունը տրամադրում է ռեսուրսներ, որոնք կարող են նպաստել կարևոր փոփոխություններին, սակայն չեն կարող լինել «մանկավարժական ասպիրին», որն անմիջապես ազդում է բոլորի վրա: Բայց մենք կարող ենք ողջամտորեն վստահ լինել, որ մեծահասակների ուսումնառությունը ամենաքիչը ներառում է գործիքայինն ու գործնականը, բայց և առաջարկում է այն, ինչ Ռեյմոնդ Ուիլյամսը (1983) անվանում է «հույսի ճանապարհորդության ռեսուրսներ»:[10]

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

«Դրական մարդիկ» նախագիծ

«Դրական մարդիկ» [11] ծրագիրը գործընկերային նախագիծ է, որն իրականացվում է «Pluss» սոցիալական ձեռնարկության կողմից, գործում է Կորնուոլում, Դևոնում և Սոմերսեթում՝ առաջարկելով ուսումնառության հնարավորություններ հասարակության սոցիալապես առավել մեկուսացված և խոցելի անդամներին: Ծրագիրը ներառում է ուսումնառության բազմաթիվ հնարավորություններ՝ համապատասխանեցված անհատական կարիքներին: «Դրական մարդիկ» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների օրինակներից են Պլիմութում գտնվող «Feel Good Shop»-ը, որը համախմբում է համայնքին՝ սովորեցնելու, թե ինչպես ապրել առողջ կյանքով գործընկերների կողմից առաջարկվող առողջության և բարեկեցության ծրագրերի միջոցով, սովորել ֆինանսների կառավարում Քաղաքացիական խորհրդատվական բյուրոյից, սովորել, թե ինչպես կարելի է արդյունավետ օգտվել թվային սարքերից և շատ ավելին: «Դրական մարդիկ» նախագիծը նաև սովորեցնում է մարդկանց ապրել կայուն և ներառական՝ կազմակերպելով միջոցառումներ նվիրված կայուն, էթիկական կյանքին, սովորեցնում է մարդկանց հետ կապեր հաստատել և համայնքին ինչ-որ բան վերադարձնել:

Սովորողի պատմություն

— *Դեբորա, 43, Իռլանդիա*

“Իմ վերականգնման ճանապարհը սկսվեց Քորկի միգրանտների կենտրոնում գտնվող սուրճի շուրջ հիմնված խմբից: Բացի որպես ուղղակի կին-միգրանտ կենտրոն այցելելու և քննարկումներին մասնակցելու հնարավորությունից, նրանք նաև առաջարկում են կարճաժամկետ դասընթացներ և ուսուցում: Հենց այդտեղ ես անցա «Ուսուցում ուսուցանողների համար» դասընթացը, որը հետագայում ինձ հնարավորություն տվեց իրականացնել ծնողավարության աշխատարաններ՝ օգնելու այլ միգրանտ կանանց, որոնք առերեսվել են նոր օրենքներին և մշակութային տարբերություններին: Մենք նաև տեղեկատվություն ենք ստանում համայնքում կազմակերպվող աշխատարանների մասին: Ես տեղեկացա նաև միջմշակութային երկխոսության դասընթացի մասին, մասնակցեցի, իսկ այժմ ես եմ այն վարում: Իրապես, այդ միջավայրում մենք բոլորս ավելի ուժեղ դարձանք:

Երբ սկսում ես դասընթացի հաճախել, սկսվում է կանոնակարգված առօրյան: Ամեն առավոտ արթնանում ես և ունես ակնկալիքներ: Հանդիպում ես մարդկանց, որոնք նմանատիպ մտածողություն ունեն և որոնց հետ կարող ես կապեր հաստատել: Այնուհետև սկսում ես ընթերցել, և մտքերդ ու երևակայությունդ սկսում են ընդլայնվել: Սկսում ես զանազան բաներ սովորել: Դառնում ես ազդեցիկ և հետաքրքիր մարդկանց խմբի մի մաս, որոնք պատմություններ են կերտում: Դու սկսում ես զգալ, որ ինչ-որ բանի մաս ես կազմում: Կրթվում ես, հզորանում ես: Դա պարզապես փոխում է ամեն ինչ: Կրթությունը նպաստել է իմ հոգեկան առողջությանը և դրական ազդեցություն է ունեցել իմ կյանքի և ընտանիքի վրա: Այժմ ես վերադարձել եմ քոլեջ և Քորկի համալսարանի Ընտանեկան իրավունքի գծով հետբուհական ծրագրում եմ սովորում:”

---

[10] Field, J. (2011). Adult learning, health and well-being – changing lives. *ADULT LEARNER 2011, The Irish Journal of Adult and Community Education*. Retrieved from https://www.aontas.com/assets/resources/Adult-Learner-Journal/AONTAS%20Adult%20Learner%20Journal%202011.pdf

[11] Positive People Programme. (2017-2023). Retrieved April 15, 2024, from https://regalenetwork.eu/wp-content/uploads/2022/06/45.-REGALE_Good-Practice-_Positive-People_UK.docx.pdf

Կյանքի հմտություններ



Մարտահրավերներ

- Եվրոպայում մեծահասակների զգալի մասը հիմնարար ու կարևոր հմտությունների, ինչպես նաև իրենց կյանքը հաջողությամբ կառավարելու համար անհրաժեշտ հմտությունների անբավարար մակարդակ ունի:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը

Յուրաքանչյուր ոք պետք է ունենա այն հիմնական հմտություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են կյանքում և աշխատանքում 21-րդ դարում: ՄՈՒԿ-ը տրամադրում է կյանքի անհրաժեշտ հմտություններ, ինչպես նաև կանխատեսում և ձևավորում է ապագա զարգացումները: Այն ներառում է բազային կամ հիմնական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են գրագիտությունը և թվաբանությունը, ինչպես նաև թվային հմտությունները, լեզվական հմտությունները և առանցքային կոմպետենցիաների լայն շրջանակը, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր մարդու առօրյա կյանքում: Դրանց թվում են ֆինանսական գրագիտությունը, առողջապահական գրագիտությունը և մեդիագրագիտությունը: ՄՈՒԿ-ը տրամադրում է հմտություններ և ուսումնառության փորձ, որոնք ունեն բազմաթիվ օգուտներ, նպատակային են և անհատներին առաջարկում են աջակցության բազմաթիվ ուղիներ՝ իրենց կարիերայի և կյանքի ընթացքում:

ՄԿԵԱ-ն իր անդամների և գործընկերների հետ միասին մշակել է «Կյանքի հմտությունների եվրոպական շրջանակ», որը կարևորում է ցկյանս և բազմաոլորտային ուսումնառությունը բոլորի համար: Տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական անընդհատ զարգացումներով բնութագրվող ժամանակաշրջանում Եվրոպայում բոլորը պետք է շարունակաբար զարգացնեն, բարելավեն և թարմացնեն իրենց կյանքի հմտությունները: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ՄՈՒԿ-ը կարող է օգնել այս հարցում. փաստերը ցույց են տալիս, որ ՄՈՒԿ ծրագրերը, անկախ ուսումնառության կոնկրետ բովանդակությունից, նպաստում են կյանքի հմտությունների զարգացմանը: ՄՈՒԿ մատակարարները պետք է ավելի շատ շեշտադրեն այս փոխկապակցված կրթական նպատակները՝ ընդգծելու սովորողների ձեռք բերած կոմպետենցիաների բազմազանությունը:

Հետազոտական տվյալները և ՄՈՒԿ փորձը ցույց են տալիս, որ այնպիսի հիմնարար հմտությունները, ինչպիսիք են թվաբանությունը, գրագիտությունը և թվային հմտությունները, հիմք են ողջ կյանքի ընթացքում ուսումնառության, ինչպես նաև կյանքի և աշխատանքի կարողությունների զարգացման համար: Կյանքի հմտությունները հնարավոր չէ սովորել վերացական և տեսական եղանակով. անձը պետք է հավաքի, ուսումնասիրի և քննարկի իր փորձառությունը, որը տեղի է ունենում իրական կյանքում: Կարևոր է հիշել կյանքի հմտությունների համատեքստային ամբողջականությունը, քանի որ դրանից է կախված կյանքի հմտություններ սովորելու հաջողությունը: Այսպիսով, կյանքի հմտությունների համատեքստը պետք է հարմարեցվի յուրաքանչյուր երկրին, խմբին և անհատին: Կյանքի հմտությունները կայուն զարգացում են ապրում անհատական, տնտեսական, սոցիալական և մշակութային համատեքստերում:

Էսթերա Մոժինան՝ Սլովենիայի Մեծահասակների կրթության ինստիտուտի թեմատիկ բաժնի ղեկավարը, EPALE-ում բլոգային գրառում է կատարել կյանքի հմտությունների վերաբերյալ:[12]

Հետազոտական տվյալներ

«Մեր հասարակություններն ենթարկվում են արագ փոփոխությունների, և հիմնականում, տեխնոլոգիական զարգացումները խթանում են այդ աննախադեպ արագությանը: Ավտոմատացումն արդեն իսկ փոխակերպում է աշխատաշուկան, և ցածր որակավորում պահանջող աշխատանքներն ավելի ու ավելի հաճախ են իրականացվում մեքենաների կողմից: Հետևաբար, տեխնոլոգիաներն ավելի ու ավելի կարևոր դեր են խաղում կյանքի մի շարք ոլորտներում՝ արագ հանգեցնելով հմտությունների գործածականության նվազեցմանը, աշխատանքային նոր մոդելների ձևավորմանը և ընդգծում

[12] Možina, E. (2022). Life skills for adults. *EPALE Österreich*. Retrieved April 15, 2024, from https://epale.ec.europa.eu/en/blog/life-skills-adults

մարդկանց՝ կյանքի ընթացքում հմտությունները թարմացնելու անհրաժեշտությունը: Տնտեսական ոլորտում մենք նկատում ենք զբաղվածության ձևերի արագ փոփոխություններ, երբ ժամանակավոր հաստիքներն ավելի տարածված են, իսկ գործատուներն ավելի հաճախ են փնտրում ճկուն և շարունակաբար սովորելու նկատմամբ դրական մոտեցման կոմպետենցիաներով աշխատողների: Ժողովրդագրական փոփոխությունները, որոնք պայմանավորված են ԵՄ-ում ծերացող բնակչությամբ, ընդգծում են անձնական բարեկեցությունը խթանելու և ավելի երկարատև, բայց նաև ավելի բավարարված կյանք ապահովելու համար նոր ջանքերի անհրաժեշտությունը: Կյանքի բարդ իրավիճակներին դիմակայելու համար եվրոպացիները պետք է շարունակաբար զարգացնեն այնպիսի կոմպետենցիաներ, որոնք թույլ կտան նրանց հաջողությամբ հաղթահարել իրենց աշխատանքում, իրենց միջավայրում և հասարակությունում բազմաթիվ անցումային փոփոխություններով պայմանավորված մարտահրավերները: Մարդիկ պետք է կարողանան հաղթահարել անորոշությունը, բարձրացնեն դիմակայունությունը, զարգանան անձնային մակարդակում, կառուցեն հաջող միջանձնային հարաբերություններ և սովորեն սովորել: Ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը կարող է նպաստել այս կոմպետենցիաների ձեռքբերմանը»:[13]

Կրթությունն իր տարբեր ձևերով (ֆորմալ, ինֆորմալ, ոչ ֆորմալ) այն հիմնական միջոցն է, որը կարող է օգնել սովորողներին զարգացնել այս կոմպետենցիաները և աջակցել նրանց որպես ուսումնառու կայացմանը: Արդյունքում, նրանք իրենց ներդրումը կբերեն հասարակությունների ձևավորմանը՝ դառնալով ավելի ներդաշնակ բնության, հանրային առողջության և այլ նշանակալի արժեքների հետ: Բոլոր ուսումնառուները, ներառյալ նրանք, ովքեր բախվում են դժվարությունների կամ ունեն հատուկ կարիքներ, պետք է ստանան համապատասխան աջակցություն ներառական միջավայրում՝ իրենց ներուժն իրացնելու համար:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Քաղաքացիական կրթակարգ Ուելսում

Կամավորներն ու ուսուցանող անձնակազմը աշխատում են Հարավային Ուելսի համալսարանի հետ՝ մշակելու ուսուցիչների վերապատրաստման այնպիսի դասընթաց «Օազիս»-ում, որը կհամապատասխանի Ուելսում ապաստան հայցող անձանց կարիքներին: Դասերի բովանդակությունը հիմնված է սովորողների իրական կյանքի կարիքների վրա:
Փախստականներն ու ապաստան հայցողները նոր երկիր ժամանելիս բախվում են յուրահատուկ մարտահրավերների և խոչընդոտների: Նրանք կարող են դժվարություններ ունենալ նույնիսկ տարրական խնդիրներ լուծելիս: Այսպես օրինակ, բժշկին այցելելիս լեզվական սահմանափակումները կարող են խոչընդոտ հանդիսանալ, և ոմանք էլ ունեն գրագիտության կարիք՝ ուսումնառության ընդհատման պատճառով:
Անվճար ESOL (անգլերեն՝ այլ լեզուներով խոսողների համար) դասընթացը անցկացվում է «Օազիս»-ում շաբաթական հինգ օր, որտեղ անցկացվում է նոր ուսուցիչների վերապատրաստման դասընթացը: Շատ փախստականների և ապաստան հայցողների համար այս դասընթացները հանդիսանում են նրանց հիմնական սոցիալական տարածքը, ապահովում են կյանքի կազմակերպված լինելու զգացողությունը և առաջարկում են ինչպես լեզվական, այնպես էլ հոգեբանական աջակցություն: Փորձնական ծրագրում ներգրավված փախստականներից մեկը ասել է. «Երբ ես անցյալ տարի եկա, դեպրեսիա և տագնապներ ունեի: Ես անգլերեն ոչինչ չգիտեի: Բայց ես հանգստանում եմ, երբ գալիս եմ «Օազիս» և այստեղ շատ բաներ եմ սովորում: Այստեղ ես մասնակցում եմ ESOL դասընթացին, իսկ ամենակարևորը՝ ինքնավստահություն եմ ձեռք բերում: Ես երբեք սա չեմ մոռանա»:[14]

---

[13] Sala, A., Punie, Y., Garkov, V., & Cabrera Giraldez, M. (2020). *LifeComp: The European Framework for Personal, Social and Learning to Learn Key Competence.* Publications of the Joint Research Centre. Retrieved April 15, 2024, from https://publications.jrc.ec.europa.eu/repository/handle/JRC120911

[14] The Citizen's Curriculum: Empowering adult learners in Wales. (2024, January 5). Retrieved April 15, 2024, from https://www.gov.wales/citizens-curriculum-empowering-adult-learners-wales

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Կյանքի հմտությունների շրջանակ

«Կյանքի հմտություններ Եվրոպայում» [15] նախագիծը մշակել է կյանքի հմտությունների շրջանակ նախատեսված գործնական կիրառության և մասնագետներին աջակցելու համար, որպեսզի նրանք կարողանան կիրառել և զարգացնել ուսումնառության և ուսուցման իրենց մեթոդները:





Life Skills for Europe project. (2016-2018). Illustration. https://eaea.org/project/life-skills-for-europe-lse/?pid=10220

[15] Life Skills for Europe project. (2016-2018). Retrieved July 12, 2024, from https://eaea.org/project/life-skills-for-europe-lse/

Ներառում, հզորացում և սոցիալական արդարություն

Մարտահրավերներ.

- աճող սոցիալական անհավասարություն, ներառականության պակաս, մարգինալացում,
- շատ մարդկանց թվում է, որ հետ են մնում և դուրս են թողնված հասարակական կյանքում մասնակցությունից:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը

Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը հիմնարար դերակատարություն ունի սոցիալական արդարության խթանման, բազմազանության ընդունման և ներառականության առաջխաղացման գործում: Հետազոտական փաստերը ցույց են տալիս, որ ՄՈՒԿ-ը անբարենպաստ իրավիճակներում հայտնվածներին հնարավորություն է տալիս բարելավել իրենց կրթությունը, աշխատանքային հեռանկարները և կյանքի որակը:

Քննադատական մտածողության և խնդիրների լուծման հմտությունները վճռորոշ են ժողովրդավարական հասարակության գործընթացներին ակտիվ մասնակցության համար: Ակտիվ մասնակցությունը խթանում է սոցիալական արդարությունը՝ ապահովելով, որ տարբեր կարծիքները լսելի լինեն և հարգվեն: Փոխարկերպող ուսուցման մեթոդաբանությունը հնարավորություններ է ստեղծում մեծահասակ ուսումնառուների՝ հատկապես նրանց համար, ովքեր չեն մասնակցել ուսումնական ծրագրերին: Արդյունքում նրանք ավելի ակտիվ մասնակցություն են ունենում հասարակությանը, համայնքին, ժողովրդավարությանը, տնտեսությանը, արվեստին և մշակույթին:

ՄՈՒԿ-ը խթանում է ավելի ակտիվ սոցիալական շարժունությանը՝ աջակցելով ինչպես նրանց, ովքեր չեն կարողացել լիարժեք օգտվել նախնական կրթությունից, այնպես էլ նրանց, ովքեր ստացել են նման կրթություն, բայց ցանկանում են շարունակել այն որպես մեծահասակ: Բազային հմտությունների ուսուցումից մինչև «երկրորդ հնարավորության դպրոցներ» և լեզուների ուսուցում՝ ՄՈՒԿ-ը տրամադրում է բազմաթիվ հնարավորություններ բարելավելու անհատների կյանքը՝ առաջարկելով ուսումնառության այնպիսի ճկուն տարբերակներ, ինչպիսիք են առցանց դասընթացները կամ երեկոյան դասերը: Այն նաև ավելի լայն հավասարություն է հաստատում հասարակություններում, դրանք դարձնում է ավելի արդար, ինչպես նաև խթանում է տնտեսական աճը:

ՄՈՒԿ-ը հատկապես հզոր գործիք է կյանքի տարբեր բնագավառների ու խավերի մարդկանց համախմբելու և փոխադարձ ըմբռնում ու հարգանք ձևավորելու գործում: Ավելին, ՄՈՒԿ-ը ունի ճկունություն՝ քննադատաբար անդրադառնալու այնպիսի հարցերի, ինչպիսիք են գենդերային հավասարությունը, ռասայական արդարությունը և բնապահպանական կայունությունը: Տեղեկացված և քննադատական մտածողությամբ օժտված մեծահասակները, որոնք հասկանում են բազմազանության, ներառականության և կայունության արժեքը, ավելի պատրաստված են ակտիվորեն գործելու ավելի ժողովրդավարական, ներառական և արդար հասարակություն ստեղծելու ուղղությամբ:

Հետազոտական տվյալներ I

«Մեծահասակների կրթության նպաստավոր դերը բացահայտվում է գործունեության ընդլայնման միջոցով, ինչը առանձին անհատների ու սոցիալական խմբերի հնարավորություն է տալիս առավելություն ստանալ իրենց շրջապատի նկատմամբ՝ իրենց անձնական և հասարակական բարեկեցությանը հասնելու ձգտմամբ: Մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ մեծահասակների ոչ ֆորմալ կրթությանը մասնակցությունը դիտարկվում է որպես անհատների հզորացման միջոց՝ նրանց ինքնավստահության բարձրացման, աշխատանքի որոնման և իրենց առօրյան կառավարելու կարողությունների ավելացման շնորհիվ... Մեծահասակների կրթության խթանիչ ազդեցությունն ավելի մեծ է ցածր կրթական մակարդակ ունեցողների մոտ, քան միջին կամ բարձրագույն կրթական աստիճաններ ունեցողների շրջանում: Սա նշանակում է, որ խոցելի խմբերին իսկապես զգայուն մոտեցում ցուցաբերելու համար մեծահասակների կրթության քաղաքականությունները պետք է ավելի լրջորեն հաշվի առնեն մեծահասակների կրթության տարբեր ազդեցությունները՝ տարբեր սոցիալական խմբերի մարդկանց հզորացման գործում:[16]

Հետազոտական տվյալներ II

Նորարարական մոտեցման, սովորողների մոտիվացնելու և ներգրավելու ռազմավարությունների և կառավարության ու այլ սոցիալական դերակատարների հետ համագործակցության միջոցով մեծահասակների կրթությունը կարող է փոփոխություններ բերել...Անհատ սովորողների և խմբերի կյանքերը վերափոխելուն ուղղված երկրորդ հնարավորություն առաջարկելուն զուգահեռ միգուցե ՄՈՒԿ կարևորագույն դերն այն է, որ ապահով հանրային միջավայր է ստեղծվում անհավասարությունն ու մարգինալացումը խթանող նեոլիբերալ կոնսենսուսի այլընտրանքների վերաբերյալ բանավեճի համար: [17]

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

«Փախստականները փախստականների համար» հզորացման ծրագիր

Շտուտգարտում ներկայումս ապրում է շուրջ 10,000 փախստական: Քաղաքականությունը, վարչակարգը և քաղաքացիական հասարակությունը համագործակցում են՝ սահուն ինտեգրման գործընթաց ապահովելու համար: Շտուտգարտ քաղաքն իրականացնում է ինտեգրմանը նպաստող բազմաթիվ թիրախային միջամտություններ: Ի թիվս այլոց, այն ստեղծել է ամենանորարար մոտեցումը. «Հզորացում» [18] կոչվող ծրագրում կրթական առաջարկները նախաձեռնում և իրականացնում են հենց փախստականները՝ տեղական շահագրգիռ կողմերի աջակցությամբ, որոնք օգնում են ընդհանուր կազմակերպչական, սենյակների և այլ հարմարությունների հարցերում: Այս կերպ նախաձեռնությունը ներառում է կրթության և կարողությունների զարգացման տարրեր միտված ինչպես փախստականներին, այնպես էլ քաղաքացիական հասարակությանը: Ավելին, առաջարկները հարմարեցված են փախստականների կարիքներին, ինչի արդյունքում հնարավոր է ստեղծել միջոցառումների հարուստ և բազմազան շրջանակ:

---

[16] Boyadjieva, P., & Ilieva-Trichkova, P. (2023). Adult education as a pathway to empowerment: Challenges and possibilities. In *Lifelong Learning, Young Adults, and the Challenges of Disadvantage in Europe* (pp. 169-191). Retrieved April 15, 2024, from https://link.springer.com/chapter/10.1007/978-3-031-14109-6_7

[17] Tuckett, A. (2015). Adult education, social transformation, and the pursuit of social justice. *European Journal of Education, 50*(3), 245–249. Retrieved from https://www.jstor.org/stable/26609273

[18] Project "Empowerment Project of Refugees for Refugees." (2015-2020). Retrieved April 15, 2024, from https://regalenetwork.eu/wp-content/uploads/2022/04/37.-REGALE_Good-Practice-Empowerment-City-of-Stuttgart.pdf

Սովորողի պատմություն

— **Ձեյսոն, 48, Միացյալ Թագավորություն**

Ձեյսոնը վերականգնվում էր ծանր ուղեղային վնասվածքից: Տարիներ շարունակ անօթևան լինելուց հետո «Newground Together»-ի շնորհիվ գտել է ուսման հնարավորություն և կյանքը նոր իմաստ է ստացել: Ձեյսոնի ուսումնական հաջողությունը հանգեցրեց ոչ միայն աշխատանքի առաջարկի, այլ նաև իր ընտանիքի հետ կապը վերահաստատելու հնարավորությանը: «Ես երկու հասուն որդի ունեմ, բայց երկար ժամանակ ուղեղի վնասվածքից հետո չէի կարողանում հիշել նրանց: Երբ իմ ուղեղը սկսեց նորից «գործել», ես ցանկացա վերականգնել հարաբերություններս նրանց հետ, բայց ամաչում էի: Ես մասնակցեցի անշարժ գույքի կառավարման դասընթացին, որը ներառում էր աշխատանքային փորձ Halifax-ում գտնվող THG անշարժ գույքի գրասենյակում: Այն ինձ սովորեցրեց գույքի խնամք, մաքրություն և գույքի հիմնական կառավարման հմտություններ: Աշխատանքային պայմանագիր ստանալուց հետո ես նաև սովորել եմ՝ ինչպես հաղորդել վնասների մասին, կազմակերպել վերանորոգումները և կապ հաստատել կապալառուների հետ: Անշարժ գույքի համար պատասխանատու լինելը կարևոր աշխատանք է: Այն մեծ պատասխանատվություն է պահանջում, և հաճելի է իմանալ, որ իմ կատարած փոքրիկ գործողությունները բարելավում են մեկ ուրիշի կյանքը: Այդ պատճառով ես ցանկանում եմ շարունակել սովորել: Ես պատասխանատու եմ զգում իմ վարձակալների և նրանց ապրելու միջավայրի համար, և կարծես հնարավորություն եմ ստացել փոխհատուցել ինձ տրված օգնությունը՝ ինքս օգնելով համայնքին:

Իմ ուղեղն այժմ շատ ավելի լավ է աշխատում, թեև վնասվածքը միշտ մնալու է: Ես կարծում եմ, որ ուսումնառությունը օգնել է վերականգնման գործընթացին՝ խթանելով, որ միտքս զբաղվի նոր կապեր ստեղծելով և ավելի ուժեղ դառնա: Սովորելը նաև հնարավորություն տվեց, որ ինձ նորից տղամարդ զգամ, և արդյունքում իմ որդիները վերագտան իրենց հայրիկին»:

Սովորողի պատմություն

— **Օլեքսանդրա, Ուկրաինա**

Իմ ճանապարհը դեպի մեծահասակների կրթություն շատ յուրօրինակ էր: Իմ փոքր որդին չէր ցանկանում սովորել: Մի հոգեբան առաջարկեց, որ ես երեխայիս համար օրինակ ծառայեմ՝ ինքս մի բան սովորելով: Պատահաբար այնպես ստացվեց, որ մասնակցեցի «Տնային հրուշակագործություն» վեբինարին և որոշեցի, որ պետք է սովորեմ ժամանակակից աղանդներ պատրաստել: Մեր քաղաքում հրուշագործության դասընթացներ չկային, բայց ես գնացքով հասնում էի «Պերշի» մեծահասակների ուսումնառության և կրթության կենտրոն (ՄՈՒԿ կենտրոն) –ի դասընթացներին (ուկրաինական Մերիտոպոլ քաղաքում, որ ժամանակավորապես օկուպացված է):

«Շուտով հասկացա, որ ինձ դուր է գալիս թխելը ու նաև լավ է ստացվում: «Պերշի» ՄՈՒԿ կենտրոնում սկսեցի մասնակցել նաև ինքնազարգացման ծրագրերի և արդյունքում հասկացա, թե ինչպես պլանավորեմ իմ ապագան»: Ժամանակի ընթացքում Օլեքսանդրան դարձավ ՄՈՒԿ կենտրոնի թիմի մաս և ինքը սկսեց վարել հրուշակագործության դասընթացներ: Նա հասկացավ, որ պետք է վերադառնա իր առաջին՝ ուսուցչի մասնագիտությանը և աշխատի որպես դասընթացավար: «Ընդունվեցի համալսարան, որտեղ ներկայումս սովորում եմ սննդի արտադրության տեխնոլոգիաների բաժնում: Ուսումնառության այս առաջին փորձից հետո չեմ էլ պատկերացնում, թե ինչպես էի առաջ ապրում առանց սովորելու: Հիմա մշտապես մասնակցում եմ նոր դասընթացների և ծրագրերի թե՛ մասնագիտական, թե՛ ինքնազարգացման գծով: Շնորհիվ «Պերշի» ՄՈՒԿ կենտրոնի դասընթացների, ինչպես նաև որպես դասընթացավար ու թիմի անդամ ՄՈՒԿ կենտրոնի հետ համագործակցությանը, 2022թ ամենադժվար ժամանակներում ես ոչ միայն գոյատևեցի, այլև նոր փորձ ձեռք բերեցի, որն ինձ օգնում է այսօր»:

Զբաղվածություն և աշխատանք



Մարտահրավերներ.

- որակավորված աշխատուժի պակաս որոշ աշխատատեղերում և ոլորտներում, ինչպես նաև միայն ցածր որակավորում և ֆորմալ հմտությունների ցածր մակարդակ պահանջող բազմաթիվ աշխատատեղերի վերացում,
- վերապատրաստման և նոր հմտությունների ձեռքբերման անհրաժեշտություն՝ կանաչ և թվային տնտեսությանը անցման, ինչպես նաև այլ բարձր պահանջարկ ունեցող ոլորտների կարիքներին համապատասխանելու համար,
- թվայնացումը, կանաչ անցումը, միջազգայնացումը, ծառայություններին միտվածությունը, աշխատանքային գործընթացների ճկունացումը և նորարարությունը պահանջում են աշխատողների կոմպետենցիաների բարձրացում և փոփոխություն:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը.

Ուսումնառության և աշխատանքի միջև դրական կապն ակնհայտ է. սովորող աշխատողներն ավելի ստեղծագործ են, նորարար, սթրեսադիմացկուն և արդյունավետ, ինչը ընկերություններին ավելի մրցունակ և հաջողակ է դարձնում: Թվայնացում, կանաչ անցում, միջազգայնացում, ծառայությունների ուղղվածություն, ճկունություն. աշխատանքային շուկայի այս բոլոր մեգամիտումների ընդհանրությունն այն է, որ դրանք բարձրացնում և փոփոխում են աշխատողների կոմպետենցիաների պահանջները: Սա նոր զարգացում չէ: Նորությունն այն է, որ պահանջներն ավելի արագ են փոփոխվում և աճում, քան երբևէ:

Մասնագիտական կոմպետենցիաները պետք է պարբերաբար թարմացվեն, իսկ սոցիալական և հաղորդակցման մետակոմպետենցիաները դառնան անհրաժեշտություն: Ինֆորմալ և ոչ ֆորմալ ՄՈՒԿ միջոցով ձեռք բերված հմտությունների և կոմպետենցիաների ճանաչումն ու վավերացումը կարևոր հիմք են վերապատրաստումների և հմտությունների կատարելագործման համար:

Աշխատաշուկայի զարգացումների և աշխատանքի ապագայի վերաբերյալ գրեթե բոլոր ուսումնասիրությունները գալիս են միևնույն եզրահանգմանը. ընթացող վերափոխումները կառավարելու համար, շարունակական վերապատրաստումը և աշխատավայրում ուսուցումը պարզապես անփոխարինելի են ոչ միայն ցածր ֆորմալ կրթություն ունեցող աշխատողների, այլև բոլոր աշխատողների համար: Աշխատանք չունեցողների համար ևս ՄՈՒԿ-ը մեծացնում է դիմակայունությունը և նվազեցնում գործազրկության կամ ցածր տնտեսական ակտիվության հետ կապվածինքնավստահության կորստի հետևանքները: ՄՈՒԿ-ը խթանում է նոր հմտությունների և կոմպետենցիաների ձեռքբերումը՝ հնարավորություն տալով զարգանալ մասնագիտորեն և ավելի բարձր որակավորմամբ աշխատանք գտնել:

ՄՈՒԿ-ը հեշտացնում է գործազրկության/աշխատանք չունենալու և աշխատանքի, կրթության և աշխատանքի, կրթության և հետագա ուսումնառության միջև կապերը (օրինակ՝ ՄՈՒԿ-ից բարձրագույն կրթություն) և օգնում է մարդկանց սահուն անցում կատարել իրենց ուսումնառության ճանապարհին:

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Աշխատավայրում բազային հմտությունների ուսուցում

Շվեյցարիայում 2018 թվականին մեկնարկել է աշխատավայրի բազային հմտությունների ուսուցման խթանման պետական ծրագիրը: Ծրագիրը աջակցում է բիզնեսներին, որոնք ներդրում են կատարում իրենց աշխատողների բազային հմտությունների ուսուցման մեջ, որպեսզի նրանք կարողանան ավելի լավ դիմակայել աշխատաշուկայի փոփոխություններին: Ծրագիրը հիմնված է Շվեյցարիայի GO նախագծի դրական փորձի վրա: Նախագիծը ցույց է տվել, որ աշխատավայրում բազային հմտությունների ուսումնառությունը չափազանց օգտակար է թե՛ աշխատողների, թե՛ գործատուների համար: [19]

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Բազային հմտությունների համար որակի ազգային ուղենիշներ

Ավստրիայի մեծահասակների կրթության նախաձեռնությունը Ավստրիայի կրթության դաշնային նախարարության և Ավստրիայի ինը նահանգների համագործակցությունն է: Այն նպատակ ունի հնարավորություն տալ մեծահասակներին, ովքեր չունեն բազային հմտություններ կամ չեն ավարտել միջնակարգ դպրոցը, շարունակել և ավարտել իրենց կրթությունը: Այս նախագծի նորարարական մոտեցումը պայմանավորված է երկու առանձնահատկություններով. առաջինը՝ ծրագրի դասընթացների իրականացման համար որակի ազգային ուղեցույցների հետևողական կիրառումը, և երկրորդը՝ այն փաստը, որ բոլոր դասընթացներն անվճար են մասնակիցների համար:

Սովորողի պատմություն

Ռեբեկա, 39, Միացյալ Թագավորություն

«Երբ Ռեբեկան աշխատում էր որպես քրեակատարողական հիմնարկի աշխատակից HMP Dovegate-ում, ընդունվեց մենեջերի ուսնակության սերտիֆիկացիոն ծրագիր: Որպես ուսնակության նախագիծ նա առաջարկեց բանտ հրավիրել Restart Dog Project-ին՝ շների վարժեցման տեղական բարեգործական մի կազմակերպության: Արդյունքում այս նախաձեռնությունը նշանակալի դրական ազդեցություն ունեցավ դատապարտյալների բարեկեցության վրա: «Ես չգիտեի՝ ինչ կարիերա եմ ուզում, երբ սովորում էի Ա մակարդակի համար, և որոշեցի, որ համալսարանն ինձ համար ճիշտ ընտրություն չէ: Հետո այդ որոշմանս համար ափսոսում էի: Երբ 2017 թվականին HMP Dovegate-ում ներկայացվեց Serco-ի մենեջերի ուսնակության սերտիֆիկացված ծրագիրը (CMDA), ես անմիջապես օգտվեցի կրթական աստիճանը ստանալու այդ հնարավորությունից, քանի որ կարծում էի, որ բաց թողածս կկարողանամ լրացնել: Զույգ երեխաների ծնունդից հետո ես նոր էի վերադարձել մայրության արձակուրդից և ցանկանում էի նրանց իմ օրինակով ցույց տալ, որ սովորելու համար երբեք ուշ չէ: Ես վճռական էի տրամադրված և ուզում էի նվազեցնել ինքնավնասման և ինքնասպանության դեպքերը մեր քրեակատարողական հիմնարկում: Ես ուսումնասիրեցի կենդանիների դրական ազդեցությունը վերականգնման գործընթացում և իմ ուսնակության նախագծի համար կազմեցի բիզնես առաջարկ, այն է՝ ներդնել օգնական շների վարժեցման ծրագիր: Իմ գաղափարը աներևակայելի հաջողված էր. եթե ծրագրի սկզբում դատապարտյալներն իրենց հոգեկան առողջությունը գնահատում էին 10-ից 4, ապա նրանց վերջին գնահատականները ցույց են տալիս, որ այդ թիվն այժմ 10-ից 8 է: CMDA-ի որակավորումը նաև առանցքային նշանակություն ունեցավ HMP Dovegate-ում որպես ծրագրի ավագ ղեկավար իմ առաջխաղացման համար: Ավարտական արարողության լուսանկարը, որտեղ ես իմ երեխաների հետ եմ, այժմ կախված է իմ գրասենյակի պատին և միշտ ժպիտ է պարգևում ինձ, երբ նայում եմ դրան»:

[19] Swiss State Secretariat for Education, Research and Innovation. (2018). Schweizerische Berufsbildungsämter (SBBB). Retrieved July 12, 2024, from https://www.sbfi.admin.ch/sbfi/de/home.html

Սովորողի պատմություն

— Կորինա, 40, Հունաստան

«Հունաստանը շատ բան ունի առաջարկելու մեծահասակների կրթության ոլորտում: Բացի համալսարաններից, այստեղ կան նաև ինստիտուտներ և ակադեմիաներ, որտեղ մեծահասակները կարող են մասնակցել հմտությունների կատարելագործման և վերապատրաստման ծրագրերին: Նախորդ տարիների համեմատ, կրթությունը դարձել է ավելի կազմակերպված, այն բաց է բոլորի համար, և ուսուցանողները բարձր որակավորում ունեն: Սակայն, ավելի մեծ ջանքերի գործադրման պարագայում իրավիճակը կարող է ավելի բարելավվել: Ներկայացնեմ Օդիսեա ակադեմիայում իմ ունեցած փորձառությունը, որտեղ ես հնարավորություն ունեցա մասնակցելու սոցիալական մեդիա մարքեթինգի ծրագրին: Թեև ինձ համար դա կրթության նոր ոլորտ էր, մասնակիցների և ուսուցանողների միջև այդպիսի փոխգործակցություն կար, որ ծրագրի բոլոր դասընթացները հաճելի էին և հեշտ ուսանելի: Դասընթացավարները շատ լավ պատրաստված էին և լավ պատկերացում ունեին շուկայի մասին որպես բիզնես: Ես ուրախ կլինեմ մասնակցել հաջորդ ծրագրին»:

Թվայնացում

Մարտահրավերներ.

- կյանքում և աշխատանքում թվային գործիքներ կիրառելու և հասկանալու անհրաժեշտությունը,
- նորագույն տեխնոլոգիաները (օրինակ՝ արհեստական բանականությունը) խաթարում են աշխատաշուկան և հիմնովին փոխում աշխատանքի, կրթության և ուսուցման բնույթն ու ապագան,
- առօրյա կյանքի թվայնացումը, օրինակ. բանկային ծառայություններն ու վճարումները, սուպերմարկետներում ինքնասպասարկման դրամարկղերը, հաղորդակցությունը և նույնիսկ թվային քվեատուփերը շատ մարդկանց համար զարգացումներից հետ մնալու պատճառ են դառնում: Սա հատկապես վերաբերում է նրանց, ովքեր չունեն տեխնոլոգիաներին հասանելիություն, լայնաշերտ ինտերնետ և թվային հմտություններ:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը

Աշխատանքի և ուսման վրա թվայնացման հնարավորությունների, մարտահրավերների և ազդեցության գիտակցումը կարևոր է յուրաքանչյուր մեծահասակի համար: Այն առանցքային է զբաղվածության, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության խթանման համար: Ներկայումս յուրաքանչյուր ոք պետք է ունենա թվային կոմպետենցիաների բավարար մակարդակ՝ հասարակությունում ակտիվ դերակատարություն ունենալու համար:

ՄԿԵԱ-ն խորապես մտահոգված է, որ «Եվրոպայի մեծահասակների 44%-ը չունի տարրական թվային հմտություններ»:[20] Մեծահասակները, որոնք չունեն նման հմտությունների բավարար մակարդակ, բախվում են սոցիալական բացառման բարձր ռիսկի: «Բիզնեսների 70%-ից ավելին նշել է, որ համապատասխան թվային հմտություններ ունեցող անձնակազմի բացակայությունը խոչընդոտ է ներդրումների համար: Եվրոպան բախվում է նաև թվային փորձագետների պակասի, որոնք կարող են մշակել նորագույն տեխնոլոգիաներ՝ ի շահ բոլոր քաղաքացիների»:[21]

Թվային գործիքները կառավարելու ունակությունը խիստ կարևոր կդառնա առաջիկա հինգ տարում: Սակայն թվայնացման ընձեռած հնարավորություններից օգտվելու ունակությունը, հավասարաչափ բաշխված չէ: Խոցելի և մարգինալացված իրավիճակներում գտնվող մեծահասակները կարող են ապագայում բախվել կրկնակի դժվարությունների՝ այս փոփոխությունների մասին իրազեկության կամ հարմարվելու միջոցների պակասի պատճառով: ՄԿԵԱ գիտակցում է բոլոր մեծահասակների համար ինչպես տարրական, այնպես էլ միջին և բարձր մակարդակի թվային հմտությունների կրթության և ուսուցման հասանելիության ապահովման կարևորությունը:

Թվային հմտություններն ավելին են, քան թվային գործիքներ գործածելը: Թվայնացումը դրականորեն օգտագործելու համար անհրաժեշտ է այնպիսի խնդիրների ըմբռնում, ինչպիսիք են ալգորիթմները, կեղծ լուրերը և օնլայն «փուչիկները»:

Տեխնոլոգիան նաև փոխում է ուսուցման և ուսումնառության ապագան՝ տրամադրելով բազմաթիվ գործիքներ, որոնք բարելավում են մեր կրթելու, ուսուցանելու և սովորելու ձևերը: Ուսուցանողները պետք է օգտագործեն այս գործիքները՝ բարելավելու իրենց աշխատանքը, ստեղծելու փորձարկման համայնքներ և կիսելու գիտելիքներն ու հմտությունները: Հետևաբար, անհրաժեշտ է ենթակառուցվածքների և ուսուցման հասանելիության բարելավում: Առցանց ուսումնառությունն առաջարկում է բազմաթիվ հնարավորություններ, բայց այն պետք է որակյալ իրականացվի. լավ էլեկտրոնային ուսուցումը «էժան տարբերակ» չէ, այլ պահանջում է ծրագրի մշակման և իրականացման որակյալ մեթոդաբանություն: Միաժամանակ, դեմ առ դեմ ուսուցումը մնում է ՄՈՒԿ կարևոր մաս:

---

[20] Towards 2023: the European Year of Skills. (2022). Retrieved April 15, 2024, from https://data.europa.eu/en/publications/datastories/towards-2023-european-year-skills

[21] European Commission. (2023). Digital skills and jobs. Retrieved April 16, 2024, from https://digital-strategy.ec.europa.eu/en/policies/digital-skills-and-jobs#:~:text=The%20European%20Commission%20has%20set

Հետազոտական տվյալներ

«Եթե թվային հմտությունները ներկայումս անհրաժեշտ են անձնական և մասնագիտական գործունեության գրեթե բոլոր բնագավառներում, ուսումնասիրությունները կանխատեսում են թվային հմտությունների պահանջարկի շարունակական աճ՝ զբաղվածության և մասնագիտական կարիերայի համար՝ թվային գրագիտությունը դնելով ընդհանուր հմտությունների հիմքում (OECD, 2021): Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) մասնագիտացված ոլորտների ավելի շատ ասպեկտներ դանդաղ, բայց շարունակաբար ներթափանցում են քաղաքացիների թվային հմտությունների դաշտ: Սրա մասին է վկայում DigComp-ի վերջին 2.2[22] տարբերակը՝ ներառելով հղումներ արհեստական բանականությանը: Ինչպես նախկինում նշել ենք, չնայած թվայնացման և թվային հմտությունների որակավորման ընդլայնման ուղղությամբ առաջընթացին և գործադրվող ջանքերին, Եվրոպայում ցուցանիշները դեռևս հեռու են այն ամենից, ինչ ԵՄ-ն պահանջում է զարգացած թվային ապագայի համար: Ուստի, ցկյանս ուսումնառության համար հստակ մոտեցումներով թվային հմտությունների վերապատրաստումներն ու կատարելագործումը այսուհետ կլինի առաջատար միտում»: [23]

ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

«Թվային գյուղ» նախագիծ

«Թվային գյուղ» նախագիծը զարգացնում է անհատների թվային կոմպետենցիաները՝ կիրառելով համայնքահեն մոտեցում: Նախագիծը նպատակ ունի համայնքային բնակելի շենքերի բնակիչներին թվայնացման հետ կապված հարցեր տալու և առօրյա կյանքում ծագող թվային խնդիրները լուծելու մատչելի հնարավորություն տրամադրել:

Volkshochschulen-ի (VHS, Մեծահասակների կրթության կենտրոններ) թվային երկու փորձագետներ տրամադրում են նյութեր և սարքավորումներ (նոութբուքեր, պլանշետներ, սմարթֆոններ և անվճար Wi-Fi) և առաջարկում են «թվային խորհրդատվական ծառայություն» [24] («Digi-Info-Stand») 2-3 ժամ տևողությամբ՝ համայնքային խոշոր բնակելի շենքերի բակերում: Բնակիչները կարող են հարցեր տալ և թվային խնդիրների համար տեղում լուծումներ ստանալ: Ուսումնական ծրագիրը չի սահմանում, թե ինչ պետք է սովորեն մասնակիցները. փոխարենը բնակիչները գալիս են հարցերով ու մարտահրավերներով՝ «տեղում» որոնելով հեշտ և հասկանալի լուծումներ: Այս նախագիծը թվայնացումը դիտարկում է որպես առանձին թեմա (ոչ թե թվայնացման կիրառումը այլ առարկաներում, օրինակ՝ լեզվի ուսուցման մեջ թվային գործիքների կիրառումը): Նախագիծն ուղղակիորեն վերաբերում է հասարակության թվային վերափոխմանը և այն փաստին, որ շատ մարդիկ չեն կարողանում հետևել այս արագ զարգացումներին:

---

[22] Digital Competence Framework for Citizens (DigComp). (2018). Retrieved April 15, 2024, from https://joint-research-centre.ec.europa.eu/digcomp/digcomp-framework_en

[23] Fernandez Sanz, L. (2023). Digital skills: A deep-dive. Digital Skills Jobs Portal. Retrieved April 15, 2024, from https://digital-skills-jobs.europa.eu/en/latest/briefs/digital-skills-deep-dive

[24] Digi-Infotage. (2021-2022). Retrieved April 15, 2024, from https://www.vhs.at/de/digiinfotag

Ժողովրդագրական փոփոխություն և միգրացիա

Մարտահրավերներ

- Ժողովրդագրական փոփոխությունները, ներառյալ Եվրոպայում բնակչության ծերացումը, միգրացիան և ուրբանիզացիան, իրենց հետք են թողնում հանրային ենթակառուցվածքների, բնակարանային ֆոնդի և սոցիալական ծառայությունների վրա՝ առաջացնելով սոցիալական ապահովության համակարգերի, սոցիալական համախմբվածության և անվտանգության ընկալման, ինչպես նաև բնապահպանական խնդիրների վերաբերյալ մտահոգությունների:
- Եվրոպայում բնակչության ծերացման հետ կապված մարտահրավերները ներազդում են կենսաթոշակային համակարգերի, առողջապահության և աշխատաշուկայի վրա: Միևնույն ժամանակ, ակտիվ ծերացմանն ուղղված միջոցառումները կարևոր նշանակություն ունեն հասարակական կյանքում տարեց բնակչության պրոակտիվ մասնակցությունն ու շարունակական ներդրումը ապահովելու հարցում:
- Կենսաթոշակային տարիքի բարձրացմամբ պայմանավորված Եվրոպայի աշխատուժը փոփոխությունների է ենթարկվում, ինչը պահանջում է համապատասխանեցումներ զբաղվածության քաղաքականություններում և պրակտիկայում՝ ապահովելու տարիքին համապատասխան աշխատանքով՝ շեշտադրելով աշխատանքի ընթացքում առողջությունն ու բարեկեցությունը: Չնայած ավելի երկար աշխատանքային կյանքին, բազմաթիվ ոլորտներում կա աշխատուժի պակաս, որը շատ երկրներում լուծվում է քաղաքական միջոցների կիրառմամբ՝ որակավորված միգրանտներին ընդունելու և այլ միգրանտների մուտքը սահմանափակելու միջոցով, այսպիսով ուժեղացնելով աշխարհի ծայրամասերից ուղեղի արտահոսքի մեխանիզմները:
- Միգրանտների ընդունման և ներառման քաղաքական միջոցառումները բնակչության մեծ մասի կողմից ընկալվում են որպես անբավարար կամ չհաջողված: Միգրանտները շարունակում են ոչ միայն մերժված զգալ հասարակության մեծամասնության կողմից, այլ նաև բախվում են աշխատաշուկային անբավարար և անհավասար հասանելիության, որակավորումների և հմտությունների ճանաչման, ինչպես նաև տարրական լեզվի և կյանքի հմտությունների ուսուցման խնդիրների: Միգրանտների և ընդունող համայնքի միջև փոխըմբռնման խթանումը, ինչպես նաև մշակութային բազմազանության պայմաններում սոցիալական համախմբվածության և սոցիալական ներառման խթանումը մնում են կարևոր քաղաքական հիմնախնդիրներ:

Ի՞նչ կարող է անել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը.

ՄՈՒԿ-ը խթանում է ակտիվ ծերացումը և նպաստում բոլոր եվրոպացիների ակտիվ մասնակցության ընդհանուր տեսլականի ձևավորմանը: Ուշ տարիքում ուսումնառությունն առանցքային դեր է խաղում ճանաչողական և սոցիալական հմտությունների խթանման և պահպանման գործում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորող տարեցներն ավելի ակտիվ են, ունեն ավելի շատ սոցիալական կապեր, ավելի հակված են կամավորական գործունեության, ավելի երկար են աշխատում և ավելի առողջ են: Սովորելը կարող է նույնիսկ օգնել դեմենցիայի դեմ պայքարելուն: Հասարակությունը, որն իրեն համարում է ներառական, պետք է որակյալ ուսումնառության հնարավորություններ տրամադրի բոլոր տարիքի մարդկանց: Սա պահանջում է քաղաքականության, ֆինանսավորման, կառուցվածքների և հասանելիության անհրաժեշտ շրջանակ՝

ներառյալ համապատասխան հետազոտական տվյալների վրա հիմնված ծախսարդյունավետության վերլուծություն:

Ուսումնառության հնարավորությունները կարող են ներառել միջսերնդային ուսումնառությունը. այն հնարավորություն է տալիս ինչպես տարեց, փորձառու մարդկանց, այնպես էլ երիտասարդներին օգտվել միմյանց գիտելիքներից և փորձառությունից: Ուսումնառության նման համատեղ գործընթացների արդյունքները կարող են նաև նպաստել միջսերնդային համերաշխությանը:

Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը կարևոր դեր է խաղում Եվրոպայի ներսում և դեպի Եվրոպա միգրացիայի հետ կապված մարտահրավերների հաղթահարման գործում: ՄՈՒԿ-ը ապահովում է անվտանգ միջավայր, որտեղ բանավեճերը և միջմշակութային ու տրանսմշակութային երկխոսությունները կարող են խթանել բնակչության և նորեկների միջև փոխանակումը: ՄՈՒԿ-ը օգնում է միգրանտներին, ապաստան հայցողներին և փախստականներին ծանոթանալ իրենց ընդունող երկրների մշակույթին և սովորություններին, ինչպես նաև տեղի բնակչությանը հնարավորություն է տալիս սովորել և գնահատել այլոց սովորույթները: Սա խթանում է դելիբերատիվ /խորհրդատվական ժողովրդավարության զարգացմանը:

Միգրանտների համար ուսումնառության հասանելի և մատչելի հնարավորությունները, ինչպես նաև նախկինում ձեռք բերված հմտությունների և ուսումնառության ճանաչումն ու վավերացումը կենսական նշանակություն ունեն: ՄՈՒԿ-ը կարևոր կամուրջ է ծառայում միգրացիայի, ծառայություններ մատուցողների և հասարակության միջև՝ նպաստելով հմտությունների ձեռքբերմանը և ներառմանը, հատկապես խոցելի խմբերի և նորեկների համար: Եվրոպան պետք է առաջնահերթություն տա ուսումնառության հասանելիությանը և միգրանտներին առաջարկի լեզվի ուսուցման դասընթացներ՝ խթանելու նրանց ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքում, ներառյալ՝ աշխատաշուկայում, և կանխելու ուղեղների արտահոսքը Եվրոպայի և աշխարհի պակաս բարեկեցիկ հատվածներից: ՄՈՒԿ-ը նաև առանցքային դեր է խաղում բարձր որակավորում ունեցող միգրանտների հմտությունների օգտագործման գործում՝ ի շահ հասարակության:

Միաժամանակ, ՄՈՒԿ-ը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որտեղ միգրացիայի արդյունքում օտարվածություն և սպառնալիք զգացող անհատներն ու հասարակությունները միգրացիայի և ներառման գործընթացները հասկանալու կոմպետենցիաներ ձեռք բերելու հարցում աջակցություն ստանան: Սա ներառում է կեղծ լուրերի և ապատեղեկատվության այլ ձևերի դեմ պայքարը, բայց նաև այնպիսի կյանքի հմտությունների խթանումը, ինչպիսիք են ապրումակցումը, քննադատական մտածողությունը և ակտիվ քաղաքացիությունը: Բացի այդ, ՄՈՒԿ-ը կարող է կարևոր դերակատարություն ունենալ բոլորի համար ավելի լավ աշխատանքային պայմանների խթանման, բնակչության տարբեր խմբերի միջև մրցակցությունը մեղմելու և որոշակի մասնագիտությունների գծով այլ երկրներից ուղեղների արտահոսքից խուսափելու գործընթացներում:

Հետազոտական տվյալներ

Բերման, Ռ. (2023). Մեծահասակների կրթության դասընթացներին մասնակցությունը կապված է ուշ տարիքում դեմենցիայի ռիսկի նվազման հետ: https://www.medicalnewstoday.com/articles/taking-adult-education-classes-lower-dementia-risk#How-adult-education-may-help-prevent-dementia

Դուրի, Ս., Դե Դոնդեր, Լ., Դե Վիտե, Ն., Բուֆել, Տ., Ջակե, Վ., և Վերտե, Դ. (2015). Լինել կամավոր, թե՝ ոչ անհատական առանձնահատկությունների, ռեսուրսների և սոցիալական գործոնների ազդեցությունը տարեցների կողմից կամավորության հավանականության վրա: Non-profit and Voluntary Sector Quarterly, 44(6), 1107-1128.

Գրանդերթ, Ջ. (2022). Սոցիալական համախմբվածություն կրթության միջոցո՞վ: Մեծահասակների ուսումնառության և կրթության արժեքը որպես ռեսուրս՝ Գերմանիայում հասարակական մեծ մարտահրավերներին արձագանքելու համար (Դոկտորական ատենախոսություն):

Հենեկամ, Ս. (2015). Մեծահասակ աշխատողների կարիերայի հաջողությունը. սոցիալական հմտությունների և շարունակապես կրթվելու կարողության ազդեցությունը: Journal of Management Development, 34(9), 1113-1133.

Յուրկովա, Ս. (2019). Տրանսմշակութային կոմպետենցիան որպես փոխակերպող ուսուցում՝ ներառական հասարակություն ձևավորելու համար: Transcultural, 2019, 08-22.

Կացման, Ռ. (1993). Կրթությունը և դեմենցիայի և Ալցհեյմերի հիվանդության տարածվածությունը: Neurology, 43(1_part_1), 13-13.

Սովորողի պատմություն

— *Ֆախրա, Միացյալ Թագավորություն*

2010 թվականին, երբ Ֆախրան տեղափոխվեց Միացյալ Թագավորություն, նա անգլերեն չէր խոսում և տան միջավայրից դուրս իրեն անվստահ էր զգում: Երրորդ երեխայի լույս աշխարհ գալուց կարճ ժամանակ անց, երբ մահացավ նրա ամուսինը, ՄՈՒԿ-ը նրա համար ճանապարհ հարթեց դեպի անկախություն: «Երբ առաջին անգամ սկսեցի իմ ESOL դասընթացը Օլդհամի Խորհրդի Ցկյանս ուսումնառության ծառայությունում, ես չէի կարողանում անգլերեն խոսել: Ես անվստահ էի, երբ միայնակ գնումներ պետք է անեի և միշտ ապավինում էի ամուսնուս: Ես խուճապի էի մատնվում, երբ խոսքը վերաբերում էր պայմանավորվածություններին և հեռախոսին չէի պատասխանում: Ամուսնուս մահից հետո երկար ժամանակ ծանր հոգեվիճակում էի և միայնակ էի խնամում իմ երեք երեխաներին: Ես սկսեցի ավելի լավ զգալ, երբ այցելեցի բժշկի և սկսեցի հակադեպրեսանտներ ընդունել: Ես կարողացա վերադառնալ Ցկյանս ուսումնառության ծառայություն և գրանցվել ավելի շատ դասընթացների: Ես ցանկանում էի ինքնավստահություն ձեռք բերել և գտնել աշխատանք, որպեսզի կարողանամ պահել երեխաներիս: Անգլերեն սովորելը ինձ թույլ տվեց հետագայում որակավորում ձեռք բերել, աշխատանք սոցիալական խնամքի ոլորտում, գումար և նոր ընկերներ: Ես ինքնավստահ շփվում եմ իմ երեխաների ուսուցիչների հետ, ինչպես նաև կարող եմ օգնել իմ համայնքի մարդկանց հասկանալ պաշտոնական փաստաթղթեր, կարդալ և մեկնաբանել իրենց նամակները: Հետևելով որպես անձ իմ զարգացմանը իմ ընկերները ասում են, որ հիանում են իմ ձեռքբերումներով: Ես միշտ նրանց ասում եմ. «Եթե ես կարողացա դա անել, բոլորը կարող են, քանի որ ես երբեք չեմ մտածել, որ կարող եմ անել այս ամենը: Ես հպարտ եմ իմ ձեռքբերումներով, և գիտեմ, որ ամուսինս նույնպես շատ հպարտ կլիներ»: Ցկյանս ուսումնառության ծառայության դասավանդող Ջուլի Միլլերը ասում է. «Ֆախրան դրական օրինակ է իր երիտասարդ ընտանիքի և տեղական համայնքի անդամների համար: Նա միշտ աջակցում է իր հետ դասընթացի մասնակիցներին և խրախուսում է նրանց գրանցվել լրացուցիչ դասընթացների՝ իրենց զարգացմանը աջակցելու համար: Ֆախրան ցկյանս ուսումնառության ջատագով է և վստահաբար կիսվում է փորձառությամբ ուրիշների հետ»:

Սովորողի պատմություն

— *Մարիա, 75, Սլովենիա*

Կենսաթոշակի անցնելուց անմիջապես հետո Մարիան ընդունվեց համալսարան: Մինչ այդ, դա պարզապես հնարավոր չէր: Այսօր նա մոլի ընթերցող է, երաժշտական համերգների և ամենատարբեր ցուցահանդեսների մշտական այցելու, ամեն առիթով կամավորություն է անում բազմաթիվ հաստատություններում: Այս ամենը նրա արածի միայն մի մասն է, իսկ ամենակարևորն այն է, որ Մարիան սովորում է յուրաքանչյուր մարդուց, ում հանդիպում է: Իսկ նա շատերին է հանդիպում :

Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը և եվրոպական ու միջազգային քաղաքականությունները

Ինչպես ցույց է տալիս այս մանիֆեստը, մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը անհրաժեշտ են եվրոպական և միջազգային քաղաքականությունների մեծ մասի իրականացման համար:

Կանաչ անցում

ՄՈՒԿ-ը նպաստում է Կանաչ անցմանը՝ շեշտադրելով այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են կայուն և բնապահպանական գիտակցությամբ տնտեսության համար: Կրթական ծրագրերի առանցքում կանաչ հմտություններն ու իրազեկվածությունն է, այդ թվում՝ վերամշակում և վերօգտագործում, որպես սպառող կրթություն, քաղաքացիական հասարակության համագործակցություն: Բացի այդ, ծրագրերը միտված են շրջակա միջավայրի կայունությանը, ինչպես նաև ավելի կայուն կենսակերպերին առաջնահերթություն տվող ոլորտներում մեծահասակների ակտիվ մասնակցությանը նախապատրաստելուն:

Թվային անցում

Թվային անցման համատեքստում, ՄՈՒԿ-ը կարևոր է անհատներին թվային գրագիտությամբ և հմտություններով զինելու համար, որոնք անհրաժեշտ են տեխնոլոգիաներով ուղղորդվող հասարակության և աշխատուժի համար: Բազմաթիվ երկրներում թվային հմտությունները անհրաժեշտ են տեղեկատվություն ստանալու, ծառայություններից (հանրային) օգտվելու, հաղորդակցվելու, գնումներ կատարելու և շատ ավելիի համար: Արհեստական բանականությունը ավելի կխթանի թվային հմտությունների պահանջը, այդ թվում՝ մանիպուլյատիվ թվային միջավայրում կողմնորոշվելու կարողությունը:

Կայուն զարգացման նպատակներ (ԿԶՆ-ներ)

ՄՈՒԿ-ը անհրաժեշտ է բոլոր ԿԶՆ-ների իրագործման համար: Խթանելով ցկյանս ուսումնառությունը, վերացնելով հմտությունների բացերը և կարևորելով ներառականությունը՝ ՄՈՒԿ-ը նպաստում է ՄԱԿ-ի կողմից սահմանված կայուն զարգացման ավելի լայն օրակարգին:

Եվրոպական սոցիալական իրավունքների հենասյունը

Կրթությունը, ուսուցումը և ցկյանս ուսումնառությունը ուսումնառությունը եվրոպական հենասյան առաջին սկզբունքներն են, որոնք ցույց են տալիս սոցիալական իրավունքների, հավասար հնարավորությունների և ուսուցման միջև սերտ կապը: Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը ապահովում են ավելի հեշտ հասանելիություն աշխատաշուկային, ինչպես նաև մասնակցություն կյանքի այլ ոլորտներում, ինչպիսիք են՝ ժողովրդավարական գործընթացները և ակտիվ քաղաքացիությունը:

Եվրոպական հմտությունների օրակարգ

ՄՈՒԿ-ը կարևոր դեր է խաղում Եվրոպական հմտությունների օրակարգի նպատակների իրագործման գործում՝ անհատներին հնարավորություն ընձեռելով հմտություններ ձեռք բերել և կատարելագործել: Ապահովելով հասանելիություն, տրամադրելով կյանքի հմտություններ և սովորողակենտրոն մեթոդաբանություն՝ ՄՈՒԿ կազմակերպությունները գտնվում են «Սովորող Եվրոպա» ձևավորելու առաջնագծում:

Հմտությունների բարելավման ուղիներ

ՄՈՒԿ-ը առանցքային դեր է խաղում «Հմտությունների բարելավման ուղիներ» ռազմավարության իրականացման գործում: Բազային և կյանքի հմտությունների ճկուն ուսուցումը, իրազեկումը և հմտությունների գնահատումը հնարավորություն են տալիս հզորացնել անհատներին և նրանց համար ավելի լավ աշխատանք և կյանք ապահովել:

Մեծահասակների ուսումնառության և կրթության քաղաքականություն

CONFINTEA VII Մարաքեշի գործողությունների շրջանակ. մեծահասակների ուսումնառության և կրթության փոխակերպող ուժի օգտագործումը

2022 թվականի հունիսի 17-ին Մեծահասակների կրթության յոթերորդ միջազգային կոնֆերանսի ընթացքում «Մարաքեշի Գործողությունների Շրջանակի» ընդունմամբ, ավելի քան 140 երկրների ներկայացուցիչներ հանձնառություն ստանձնեցին իրականություն դարձնել ցկյանս ուսումնառության իրավունքի տեսլականը: Նրանք պարտավորվեցին զգալիորեն ավելացնել մեծահասակների մասնակցությունը ուսումնառությանը և ճանաչեցին մեծահասակների ուսումնառության և կրթության ոլորտում ֆինանսական ներդրումների ավելացման անհրաժեշտությունը: ՄՈՒԿ ոլորտում քաղաքացիական հասարակությունը ամբողջ աշխարհում (ՄԿԵԱ-ն և նրա անդամները՝ եվրոպական տարածաշրջանի համար) համագործակցում են և աջակցում կառավարություններին՝ այս հավակնոտ տեսլականն իրագործելու համար:

Մեծահասակների ուսումնառության եվրոպական օրակարգ

Մեծահասակների ուսումնառության Եվրոպական օրակարգը շեշտադրում է ՄՈՒԿ կարևորությունը սոցիալական ներառման, ակտիվ քաղաքացիության և անձի շարունակական զարգացման խթանման մեջ: ՄԿԵԱ-ն և նրա անդամները Օրակարգի իրականացման առանցքային դերակատարներից են: ՄՈՒԿ-ն իրականացնում է գործողություններ ուսումնառության և աշխատանքի առավել քիչ հնարավորություններ ունեցողներին հասնելու, աջակցելու և հզորացնելու համար, ինչպես նաև նրանց, ովքեր նվազագույնն են օգտվել նախնական կրթական հնարավորություններից:

Քաղաքականության առաջարկներ

ՄԿԵԱ-ն եվրոպական և ազգային քաղաքականություն մշակողներին խորհուրդ է տալիս.

- Ճանաչել մեծահասակների ոչ ֆորմալ ուսումնառության և կրթության օգուտներն ու կարևորությունը անհատների, համայնքների և հասարակության համար՝ ժողովրդավարության, աշխատաշուկայի, առողջապահական համակարգերի և այլ հիմնական ոլորտներում:
- Ընդունել, որ հիմնական մարտահրավերները, որոնց բախվում է Եվրոպան, չեն կարող լուծվել առանց մեծահասակների ուսումնառության և կրթության:
- Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը ճանաչել Եվրոպայի առանցքային քաղաքական առաջնահերթություն:
- Ընդունել, որ հմտությունների հայեցակարգը պարունակում է աշխատանքի և կյանքի համար ուսումնառության լայն շրջանակ:
- Օգտագործել Եվրոպական Սեմեստրը որպես ՄՈՒԿ-ին աջակցելու և զարգացնելու հիմնական գործիք:
- Եվրոպական կրթական տարածքը վերածել ցկյանս ուսումնառության իրական եվրոպական տարածքի, որտեղ բոլոր ոլորտները ունեն հավասար կարգավիճակ և առաջնահերթություն:
- Սոցիալական իրավունքների եվրոպական հենասյան իրականացմանը մոտենալ քաղաքացիակենտրոն տեսանկյունից՝ ցկյանս ուսումնառության ուժեղ շեշտադրմամբ:
- Խթանել համագործակցությունը և աջակցել ցկյանս ուսումնառությանը Եվրոպական հարևանության երկրներում և աշխարհի այլ մասերում:
- Բարձրացնել համագործակցությունը, փոխգործակցությունը քաղաքականության, պրակտիկայի և հետազոտությունների միջև և դրանցից սովորելը:
- Ստեղծել և/կամ ուժեղացնել քաղաքացիական երկխոսությունը մեծահասակների ուսումնառության հարցերի շուրջ և աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին:
- Մշակել և կիրառել համարժեք/ադեկվատ կառավարման և ֆինանսավորման համակարգեր, որոնք անհրաժեշտ են հասանելիության, որակի ապահովման և ողջ կյանքի ընթացքում ուսումնառության մասնակցությունը մեծացնելու համար:
- Ներդնել համապատասխան ֆինանսական ռեսուրսներ ՄՈՒԿ-ում և դա դիտել որպես ներդրում և ոչ թե ծախս:
- Ստեղծել ցկյանս ուսումնառության համապարփակ համակարգեր, որոնք առաջընթացի հնարավորություն են տալիս՝ նաև վավերացման և ճանաչման միջոցով:
- Ֆինանսավորել և աջակցել համայնքներում ուսումնառությանը:
- ՄՈՒԿ կառույցների համար ստեղծել ֆինանսական խթաններ, որոնք թույլ կտան մշակել և առաջարկել կլիմայական գրագիտության դասընթացներ մեծահասակների համար:
- Խթանել կլիմայական կրթական ծրագրերը, որոնք մեծահասակներին հնարավորություն են տալիս գործուն քայլեր ձեռնարկել իրենց համայնքներում կլիմայի փոփոխությունների հետ կապված հարցերի լուծման համար:
- Աջակցել համայնքային այն նախաձեռնություններին, որոնք մեծահասակներին ներգրավում են կենսակայունության այնպիսի ծրագրերում, ինչպիսիք են համայնքային այգիները, էներգաարդյունավետության վերազինումը և թափոնների կրճատումը:
- Ապահովել շարունակական մասնագիտական զարգացում մեծահասակների ուսուցանողների համար՝ կենտրոնանալով մանկավարժական այն մեթոդների վրա, որոնք նպաստում են փոխակերպման գործընթացներին, ժողովրդավարությանը և խաղաղությանը:
- Աջակցել միմյանցից սովորելու սկզբունքով գործող ցանցերին և մենթորության ծրագրերին՝ կիսելով լավագույն փորձը և նորարարությունը ՄՈՒԿ-ում:

ՄԱՆԻՖԵՍՏ
Մեծահասակների ուսումնառությունը
21-րդ դարում

EUROPEAN ASSOCIATION FOR
THE EDUCATION OF ADULTS

Mundo-J, Rue de l'Industrie 10, 1000 Brussels
https://eaea.org/